«ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՎԱՐԴԵՆԻՍԻ ԲԺՇԿԱ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Երևան – 2020

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ....3
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ....4
ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ....4
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ....12
ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ....12
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ....12
ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ....15
ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ....15
I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ....15
II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ....18
III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ....23
IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐ....27
V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄ....30
VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ....34
VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ....37
VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ....42
IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ....44
X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ....47
ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ....50
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ....51
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ....51
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ....52
ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ....53
ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ....54
1. Լսարաններ....54
6. Գրադարան....54
7. Բուժկետ....54
8. Վարդենիսի զիվորական կայազորային հոսպիտալ....54
9. Վարդենիսի քաղաքային պոլիկլինիկա....54
10. Վարդենիսի հոգեբուժարան....54
ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ....54
ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ....55

ՆԱԽԱԲԱՆ

Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջի ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվում է ուսումնական հաստատության նախաձեռնությամբ և նրա կողմից ներկայացված դիմումի հիման վրա: Հավատարմագրման գործընթացը կազմակերպվել և համակարգվել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) կողմից:

Իր գործողություններում ՈԱԱԿ-ն առաջնորդվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011 թվականի հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N 959–Ն որոշմամբ:

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը, որը բաղկացած է եղել 4 տեղացի փորձագետից:

Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանն, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը:

Սույն զեկույցն անդրադառնում է Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությանն՝ ըստ պետական հավատարմագրման չափանիշների ու չափորոշիչների:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

Փորձաքննությունն իրականացվել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի «Փորձագիտական խմբի ձևավորման կարգի» պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը[1]: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959-Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Գնահատումն իրականացնելիս հաշվի է առնվել, որ Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջը ուսումնական հաստատությունն է, որի առաքելության է ֆորմալ և լրացուցիչ կրթության միջոցով ապահովել տարածաշրջանի բժշկական ոլորտը այնպիսի մասնագետներով, որոնք իրենց մասնագիտական գիտելիքներով, կարողություններով ու հմտություններով կաջակցեն առողջապահության և բժշկական կարևոր նշանակություն ունեցող դեղագործության, քույրական գործ, բուժական կոսմետոլոգիա մասնագիտությունների զարգացմանն ու կայացմանը: Լինելով սահմանամերձ գոտում գործունեություն ծավալող կրթական հաստատություն՝ քոլեջում կրթություն են ստանում Վարդենիսի 20 համայնքների դպրոցականներ: Համայնքների մի մասում բնակություն են հաստատել Ադրբեջանից բռնազաղթված սոցիալապես ոչ բարվոք վիճակում գտնվող մեր հայրենակիցները: Այդ գյուղերում, որպես կանոն, բժշկական կադրերի սուր պակաս կա: Հաշվի առնելով այդ հանգամանքները քոլեջը առաջարկում է չափազանց ցածր ուսման վարձավճարներ և տրամադրում է տրանսպորտային միջոց ուսանողների տեղափոխման համար: Առաքելության մեջ ընդգծվում է, որ քոլեջը, «ձգտելով պատրաստել հիմնարար ու կիրառական գիտելիքներով, գործնական հմտություններով օժտված որակյալ մասնագետներ, ձևավորում է ուսանողակենտրոն միջավայր, որտեղ ուսանողը հանդես է գալիս որպես կրթական գործընթացի սուբյեկտ»: Քոլեջի առաքելությունը համապատասխանում է ՀՀ որակավորումների ազգային շրջանակի /հաստատված ՀՀ Կառավարության կողմից 2016թ. հուլիսի 7-ին/ 5-րդ մակարդակին: Ներքին և արտաքին շահակիցները գիտակցում են քոլեջի գործունեության կարևորությունը տարածաշրջանում և սահմանամերձ գոտում: Փորձագիտական խումբը այդ առաքելությունը ընդգծող, տարածաշրջանի համար քոլեջի կարևորությունը հիմնավորող նամակ ստացավ Վարդենիսի քաղաքապետից:

Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջի առաքելությունը, տեսլականը, մնայուն արժեքները և գործունեության սկզբունքները ներկայացված են քոլեջի ռազմավարական ծրագրում: «Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջ» ՍՊԸ-ում այսօր իրականացվում է 4 միջին մասնագիտության կրթական ծրագիր:

Քոլեջը, լինելով ՀՀ արևելյան սահմանամերձ գոտում բժշկագիտության ոլորտում կրթական գործունեություն իրականացնող միջին մասնագիտական կրթական հաստատություն, մշակել է մեխանիզմներ և ընթացակարգեր՝ իր գործունեության արդյունավետությունը և ռազմավարական նպատակների առաջընթացը գնահատելու նպատակով, որոնք հաշվի են առնում ինչպես արտաքին, այնպես էլ ներքին շահակիցների կարծիքը: Սակայն դրանցից կիրառվում է միայն հաշվետվողականության մեխանիզմը: Հետագա զարգացման համար կենսականորեն անհրաժեշտ է, որ քոլեջը բազմազանացնի գնահատող մեխանիզմներն ու մշակի դրանց համապատասխան գործիքակազմ: Բացի այդ քոլեջի ողջ կազմը (ՊԴ և վարչական) պետք է կիսի այն արժեքները, որոնք սահմանված են

[1] Հավելված 1. Փորձագիտական խմբի ինքնակենսագրականները:

առաքելության մեջ, այլ ոչ միայն վերադասության կարգով ընդունի այն որպես գործող իրողություն:

Քոլեջի վարչարարության նպատակն է բարելավել և զարգացնել կառավարման համակարգը, ունենալ այնպիսի մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ, որոնք կնպաստեն ռազմավարական պլանի իրագործմանը: Ներկայացված ռազմավարական պլանը շատ հավակնոտ է ու ռիսկային է իրականացման հնարավորության տեսակետից:

ՊԻՍԲ կառավարման ցիկլի հետ համահունչ պատշաճ որակի ապահովումը և շարունակական բարելավումը հնարավոր է միայն ողջ անձնակազմի մասնակցության դեպքում, որն իրագործելու համար անհրաժեշտ են ՊԴ կազմի, վարչական և օժանդակ անձնակազմի համար հետագա դասընթացներ և վերապատրաստումներ՝ կառավարման թույլ կողմերի շտկման ուղղությամբ: Անհրաժեշտ է նաև քոլեջի գործելառճի որակի վրա ազդող ներքին և արտաքին գործոնների մշտական վերլուծություն կատարել: Փաստաթղթերի էլեկտրոնային շրջանառության ներմուծումը կարող է այս առումով օգտակար լինել: Դա կապահովի վարչարարության մակարդակում տեղեկատվության անընդհատ տրամադրումը, կբարելավվեն քոլեջի վերաբերյալ տեղեկատվության տարածման մեխանիզմները:

Քոլեջում ներդրված կրթական ծրագրերը ընդգրկում են մեկ մակարդակ՝ որակավորումների ազգային շրջանակի 5-րդ մակարդակը: Քոլեջում դեռևս չեն իրականացվում կարճաժամկետ կրթական ծրագրեր վճարովի և անվճար ուսուցման հիմունքներով, որոնք կարող են նպաստել քոլեջի վարկանիշի բարձրացմանը, ֆինանսական մուտքերի բազմազանեցմանը և դիմորդների քանակի մեծացմանը:

ՄԿԾ-ները նկարագրված են ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից սահմանված ՊԿՉ-ների կրթական չափորոշիչներով, որոնք հիմնվում են գիտելիքի, հմտությունների և կոմպետենցիաների ոլորտներում չափելի վերջնարդյունքների՝ վրա՝ հասցեագրված հիմնական հաճախորդի՝ Վարդենիս քաղաքի պոլիկլինիկային, մի քանի դեղատներին և կոսմետոլոգիական սրահներին, գյուղերի բժշկական ծառայություններին և այլն: Սակայն քոլեջի կողմից մշակված դասընթացների ծրագրերի վերջնարդյունքները երբեմն չեն համապատասխանում ՄԿԾ վերջնարդյունքներին:

ՄԿԾ-ներ, ինչպես նաև ուսուցման և ուսումնառության մեթոդներ մշակելիս անհրաժեշտ է առաջնահերթություն տալ ուսանողների շրջանում աշխատաշուկայում պահանջված առավել արդյունավետ կոմպետենցիաներին: Ցավոք, այժմ քոլեջում այդպիսի մեխանիզմներ չկան, որոնք թույլ կտային ստուգել հմտությունների և կոմպետենցիաների համապատասխանությունը որակավորումների ազգային շրջանակին: Կարևոր է ժամանակ առ ժամանակ կատարվող արդիականացումը և ուսումնական ծրագրի վերանայումը՝ դրանց համար տրամադրված գործնական և ակադեմիական տարրերի ճիշտ համադրությամբ:

Քոլեջի ՄԿԾ-ները մշտադիտարկման չեն ենթարկվում, որը մտահոգության տեղիք է տալիս: ՄԿԾ-ների թույլ կողմն է միջազգայնացման և ուսանողական, դասախոսական շարժունության համար նախապայմանների բացակայությունը /չի իրականացվում ծրագրերի բենչմարքինգ, օտար լեզուների ուսուցումը թույլ հիմքերի վրա է, հետևապես նույնիսկ քոլեջների՝ համար հանրապետությունում միջազգային փոխանակման ծրագրերի առկայության դեպքում քոլեջը չի կարողանա դրանցից օգտվել/:

Քոլեջում չկա գիտելիքների, հմտությունների և կոմպետենցիաների գնահատման միասնական համակարգ՝ միտված դասընթացի նկարագրիչներով սահմանվող ուսանողների կողմից ակնկալվող ելքային արդունքների յուրացմանը: Գնահատման արդյունավետությունը չի ստուգվում որակի ապահովման ձեռնարկի (ձեռնարկը դեռևս չի մշակվել) կամ որակի ապահովման կողմից սահմանված գործիքների միջոցով, քանի որ վերջիններս դեռևս մշակման փուլում են:

Քոլեջի ուսանողների ընդունելության, ընտրության և կրթության կազմակերպման համար գոյություն ունեն հստակ մեխանիզմներ: Քոլեջը ուսանողներին հնարավորություն է ընձեռում դիդակտիկ աջակցության, հավելյալ խորհրդատվության ու ապահովում է

ուսանողների իրավունքների պաշտպանությունը: Ընդհանուր առմամբ, քոլեջը ուսանողներին աջակցում է և ապահովում ուսումնառության արդյունավետությունը:

Դեռևս չկան մեխանիզմներ, որոնք կաջակցեին ուսանողներին հետազոտական ոլորտում՝ ՈԱԾ-ի 5-րդ մակարդակի պահանջներին համապատասխան: Քոլեջի ուսանողների՝ հետազոտություններին ունեցած մասնակցությունը փաստացի սահմանափակվում է ռեֆերատներով (նախկինում եղել են նաև կուրսային աշխատանքներ): Քոլեջի ընդհանուր հետազոտական գործունեությունը թույլ է, այդ իսկ պատճառով ուսանողների ներգրավվածությունը նույնպես ցածր է:

Գոյություն ունեն քոլեջի դասավանդողներին աշխատանքի ընդունելու համար գործող ընթացակարգային կանոններ, սակայն դրանք այնքան էլ հստակ չեն, իրենց բնույթով հայեցողական են, այլ ոչ՝ ակադեմիական: Դրա հետ մեկտեղ բաժինների և ամբիոնների դասախոսների ու դեկավարների մեծ մասը իրենց ոլորտում բազմամյա մասնագիտական փորձ ունեցող մասնագետներ են, ինչը դրական ձեռքբերում է:

Ակադեմիական անձնակազմի ղեկավարման հարցում կարևոր գործոն է այնպիսի մեխանիզմների առկայությունը, որոնք թույլ կտան գնահատել կրթական և հետազոտական գործունեության որակը՝ ինչպես խթանիչ, այնպես էլ պատժիչ կամ տույժի ենթարկելու ընթացակարգով: Սակայն դրանք քոլեջում դեռևս մշակված չեն: Միջազգային համագործակցությունը խաթարող գործոններից է քոլեջի անձնակազմի կողմից օտար լեզուների չտիրապետելը:

Քոլեջի հետազոտական ներուժը շատ սահմանափակ է: Որպես հետազոտական գործունեության նախաձեռնողներ հանդես են գալիս որոշ դասախոսներ: Նրանք ունեն կիրառական բնույթի հետաքրքիր հետազոտություններ: Հետազոտական աշխատանքների ծավալմանը խոչընդոտում է ֆինանսական ռեսուրսների և հստակ մեխանիզմների բացակայությունը: Քոլեջը հետազոտական գործունեության ոլորտում ՌԾ-ում նպատակներ չի սահմանել, չի կարևորում այս ոլորտի զարգացումը, մինչդեռ հետազոտության և ուսուցման կապի ապահովումը շատ կարևոր է ինչպես կրթության բովանդակության արդիականության ապահովման, այնպես էլ ուսանողների մոտ քննադատական մտածողություն զարգացնելու տեսանկյունից:

Քոլեջը որպես ոչ պետական ուսումնական հաստատություն չի ստանում ֆինանսավորում ՀՀ պետական բյուջեից: Քոլեջի ֆինանսական ռեսուրսների գոյացման միակ աղբյուրը ուսման վճարներն են: Մինչդեռ ֆինանսական ռեսուրսները խիստ կարևոր դեր ունեն քոլեջի առաքելության և նպատակների իրականացման հարցում: ՏՏ, հատուկ մասնագիտական լսարանների, վիրահատարանների, դեղագործական լաբորատորիայի, բուժական կոսմետոլոգիայի կահավորված և այլ սենյակների առկայությունը քոլեջում էապես կարևոր է: Թեպետ քոլեջը այսօր ապահովում է պահանջվող մինիմումը, սակայն ենթակառուցվածքների ոլորտում հետագա ներդրումների կարիք կա:

Նույն կերպ անհրաժեշտ է ներդրումներ կատարել գրադարանում, որտեղ մասնագիտական գրքերի և ամսագրերի՝ հատկապես օտարերկրյա, ակնհայտ կարիք կա: Գրադարանային գործ մասնագիտության համար որոշակի նյութատեխնիկական հագեցվածության անհրաժեշտություն կա:

Հանրության համար Քոլեջի ներքին գործընթացները հեռու են թափանցիկ լինելուց, չնայած քոլեջը կամենում է ստեղծել հանրությանը իր գործունեությունների մասին տեղեկացնելու նոր ուղիներ՝ մասնավորապես ստեղծել և գործարկել քոլեջի կայքէջը: Քոլեջի գործողությունների տարեկան զեկույցները կամ հաշվետվությունները ներկայացվում են ՀՀ հարկային մարմնին, Տեղական ինքնակառավարման մարմիններին և վերադասության կարգով ԿԳՄՄ նախարարությանը:

Հանրության համար քոլեջի վերաբերյալ տեղեկատվությունը ապահովվում է արտաքին շահակիցների հետ համագործակցությամբ, տարածքի դպրոցներ այցելությամբ, երբեմն նաև Վարդենիս քաղաքում իրականացվող միջոցառումներին ներգրավվմամբ:

Քոլեջը բոլորովին վերջերս է սկսել զարգացնել իր արտաքին կապերը և փորձեր են կատարվել փոխանակվել լավագույն փորձով հանրապետության քոլեջների հետ: Սակայն միջազգային հարթակներում համանման կառույցների հետ համագործակցության փորձեր դեռևս չկան:

Կարևորվում է նաև միջազգայնացման զարգացման տեսանկյունից քոլեջի ռազմավարության մեջ ամրագրել միջազգայնացմանը նպաստող համապատասխան նպատակ և դրանից բխող խնդիրներ, որոնց հետևողական իրականացումը քոլեջի համար կապահովի ոլորտի շարունակական զարգացում: Միջազգայնացմանը նպաստող առաջին կարևորագույն քայլերից կարող են լինել Հայաստանում գործող միջազգային կազմակերպությունների հետ կապերի հաստատումը: Այսպիսի կապերը առանձնապես ծախսատար չեն և կարող են նորագույն գիտելիքի աղբյուր հանդիսանալ:

Քոլեջի՝ միջազգային կապերի զարգացման կարևոր խոչընդոտ է պաշտոնական կայքի բացակայությունը, որտեղ քոլեջի իրականացրած կրթական գործունեության վերաբերյալ ռուսերեն և անգլերեն լեզուներով կներկայացվեն համապատասխան նյութեր և տեղեկատվություն: Միջազգային ծրագրերի և համագործակցության վերաբերյալ տեղեկատվության պակասը միջազգայնացման համար խոչընդոտ է և նվազեցնում է քոլեջի ճանաչումը ակադեմիական, գիտական և միջազգային ինստիտուտների ու կազմակերպությունների կողմից, որոնք կարող են քոլեջի ապագա գործընկերները լինել:

Որակի ապահովման համակարգի ներդրումը քոլեջում սկսվել է 2017թ.-ից: Քոլեջը որակի ապահովման ոլորտում ունի քաղաքականություն և որոշ ընթացակարգեր՝ նախատեսված անհրաժեշտ փաստաթղթերով: Դեռևս չկա հրապարակված որակի ապահովման ձեռնարկ, որով կառաջնորդվեն քոլեջի կառուցվածքային տարբեր միավորները: Ներքին որակի ապահովման գործողությունների կառավարման համար քոլեջը բավարար մարդկային ռեսուրսներ ունի, սակայն որակի ապահովման ՊԻՍԲ շրջափուլը չի կիրառվում քոլեջի բոլոր գործընթացներում, և ոչ բոլոր աշխատակիցներն են ընկալում որակի մշակույթը: Որակի ապահովման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների իրական ներգրավման մեխանիզմների կարիք կա:

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐՆ ԵՆ.

1) Բացառիկ դերակատարություն տարածաշրջանի կրթական կարիքների բավարարման ոլորտում,
2) Գրավչություն տարածաշրջանի դիմորդների և գործատուների շրջանում,
3) Մասնագիտության կրթական ծրագրերի իրականացման համար բարենպաստ ուսումնական միջավայրի առկայություն,
4) ՄԿՕ-ներին համապատասխան որակավորում ունեցող դասախոսական կազմի առկայություն, տարածաշրջանում առկա բուժիմնարկների ճանաչված մասնագետների ներգրավմամբ,
5) Ուսանողների և շրջանավարտների համար ՊԴ կազմի խորհրդատվության հասանելիություն,
6) Կրթական միջավայրի ապահովության, առողջության և անվտանգության պահպանմանն ուղղված բավարար ծառայությունների առկայություն,
7) Կրթական գործընթացի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների առկայություն,
8) Զգայուն մոտեցում տարածաշրջանի սոցիալ-տնտեսական առանձնահատկությունների նկատմամբ, տրանսպորտի տրամադրում հեռավոր գյուղերի ուսանողներին:

9) Քոլեջում որակի ներքին ապահովման համար պատասխանատուի հաստիքի առկայություն, որակի ներքին ապահովման համակարգ ձևավորելու ուղղությամբ գործընթացի մեկնարկ:

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐՆ ԵՆ.

1) Որոշումները կայացնելիս քոլեջը չի հիմնվում ներքին և արտաքին գործոնների համակողմանի վերլուծության վրա,
2) Քոլեջի ռազմավարական ծրագրում հստակ արտահայտված չեն ակնկալվող արդյունքներն ու կատարողականի ցուցիչները:
3) Քոլեջի կազմակերպական կառուցվածքը հարմարեցված չէ ռազմավարական նպատակների իրականացմանը, առկա է կառավարչական ռեսուրսների օպտիմալ տեղաբաշխման խնդիր,
4) ՄԿԾ-ների իրացման փուլում մոդուլային ուսուցման տարրերը լիարժեք ներդրված չեն,
5) Քոլեջը չունի դասախոսական կազմի զարգացման ծրագիր, ինչը վտանգում է ՄԿԾ իրականացման համար մարդկային ռեսուրսների կայունությունը,
6) Քոլեջի ռեսուրսները արդիականացման խնդիր ունեն,
7) ՄՈՒՀ-ում օտար լեզուների իմացության մակարդակը ուսանողների և դասախոսների շրջանում շատ ցածր է, ինչը խոչընդոտում է միջազգայնացման գործընթացին,
8) Գործընթացների մեծ մասը քոլեջում գտնվում են պլանավորման և իրականացման փուլում, փակված չէ ՊԻՍԲ շրջափուլը:

ՀԻՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

Առաքելությունը և նպատակները

1) Վերաձևակերպել հաստատության առաքելությունը՝ ընդգրկելով քոլեջի հստակ դերակատարությունը տարածաշրջանում: Առաքելության ձևակերպման համար իրականացնել ուսումնասիրություններ արտաքին շահակիցների շրջանում:
2) Ստեղծել ՌԾ իրականացման պլան-ժամանակացույց ըստ տարիների՝ կատարելով միջոցառումների և դրանց համար անհրաժեշտ ռեսուրսների (այդ թվում՝ նյութական և ֆինանսական) հստակ բաշխում:
3) Սահմանել ՌԾ առաջընթացի գնահատման հստակ ցուցիչներ և իրականացնել ռազմավարական նպատակների և խնդիրների իրականացման արդյունավետության վերլուծություն՝ այդ ցուցիչների կիրառմամբ:
4) Մշակել և կիրառել ՌԾ հաշվետվության ձևաչափ, ստեղծել ՌԾ գնահատման համար մոնիթորինգային խումբ:
5) Ներդնել առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատմանն ու բարելավմանն ուղղված մեխանիզմներ և ընթացակարգեր:

Կառավարումն ու վարչարարությունը

1) Բարեփոխել քոլեջի կազմակերպական կառուցվածքը և հարմարեցնել քոլեջի ռազմավարական նպատակներին:
2) Վերանայել ՌԾ-ն՝ սահմանելով քոլեջի համար անհրաժեշտ առաջընթացի գնահատման ցուցիչներ:

3) Ապահովել ռազմավարական նպատակներից բխող կառուցվածքային ստորաբաժանումների գործառույթների հստակ տարանջատումը, համապատասխան կանոնակարգերով դրանց ամրագրումը և ամբողջական իրականացումը:
4) Իրականացնել ՄՈՒՀ-ի վրա ազդող արտաքին և ներքին գործոնների միասնական համակարգված ուսումնասիրություն և արդյունքները ներդնել ռազմավարական ծրագրերի մշակման հիմքում:
5) Իրականացնել ՌԾ-ին համապատասխան ֆինանսական պլանավորում՝ բյուջեն կապակցելով ռազմավարական նպատակների և խնդիրների հետ՝ պլանի իրագործման ձախողումից խուսափելու համար:
6) Կազմել ռազմավարական պլանից բխող միջնաժամկետ և կարճաժամկետ հստակ պլաններ ստորաբաժանումների համար և արդյունքների վերլուծական հաշվետվություններ:
7) Վերանայել ՄՈՒՀ-ի քաղաքականության և ընթացակարգերի վարչարարությունը՝ ներդնելով որակի կառավարման ՊԻՍԲ սկզբունքը բոլոր գործընթացներում:
8) Ստեղծել ՄՈՒՀ-ի կրթական ծրագրերի և այլ գործընթացների կառավարման և արդյունավետության գնահատման ու վերլուծության համար հավաքագրվող անհրաժեշտ տեղեկատվական բազա, այն հասանելի դարձնել շահակիցներին:
9) Մշակել շահակիցների տեղեկացվածության գնահատման մեխանիզմներ՝ տրամադրելով տեղեկատվություն ոչ միայն կրթական ծրագրերի բովանդակության, այլև դրանց որակի մասին:

Մասնագիտության կրթական ծրագրերը

1) Մշակել և իրականացնել ՄԿԾ-ների վերանայման ժամանակացույց՝ ներգրավելով ներքին և արտաքին բոլոր շահակիցներին ՄԿԾ-ների հետագա զարգացման գործընթացում:
2) Մեծացնել շրջանավարտների և գործատուների ներգրավվածությունը ՄԿԾ-ների մշակման, վերանայման և ներդրման գործընթացներում:
3) Իրականացնել բենչմարքինգ բոլոր ՄԿԾ-ների համար:
4) ՄԿԾ-ներում արտացոլել ուսումնառության և դասավանդման մեթոդների առանձնահատկությունները ու գնահատման ձևերի կապը վերջնարդյունքների հետ:
5) Մշակել և իրականացնել գրագողության դեմ պայքարի և ակադեմիական ազնվության քաղաքականություն՝ հատուկ բժշկական ոլորտի ՄԿԾ-ների համար:
6) Հստակեցնել գործող գնահատման համակարգի մեթոդաբանությունը՝ ապահովելով կիրառվող մեթոդների համապատասխանությունը վերջնարդյունքներին,
7) Հատուկ մասնագիտական դասընթացները ըստ հաստատված մոդուլների իրականացնել գործատուների մոտ:

Ուսանողները

1) Կատարել ուսանողների հավաքագրման և ընդունելության գործընթացների որակական ուսումնասիրություններ՝ գնահատելու կիրառվող քաղաքականության արդյունավետությունը և գործընթացների օբյեկտիվությունը:
2) Կատարելագործել ուսանողների կրթական կարիքների վերհանման մեխանիզմները և ուսումնասիրել դրանց արդյունավետությունը:
3) Զարգացնել ուսանողների հետազոտական կարողությունները, ուժեղացնել հետազոտություն-ուսումնառություն կապը, ինչը կնպաստի ուսանողների մոտ աշխատաշուկայում պահանջված քննադատական մտածողության ձևավորմանը:
4) Բարձրացնել կարիերայի կենտրոնի գործառույթների վերաբերյալ տեղեկացվածության աստիճանը ուսանողների առավել լայն շրջանում:

5) Մշակել ուսանողների՝ վարչակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույցեր:
6) Բարելավել ուսանողներին մատուցվող ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմները:

Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը

1) Ներդնել ՊԴ և ՈՒՕ կազմի ընտրության մրցութային կարգ՝ թափանցիկություն և հրապարակայնություն ապահովելու, ինչպես նաև լավագույն կադրեր ներգրավելու նպատակով:
2) Հստակեցնել կրթական ծրագրերի նպատակներին համապատասխան դասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջները:
3) Մշակել և ներդնել դասախոսների մասնագիտական վերապատրաստումների համակարգ:
4) ՊԴ կազմի վերապատրաստման ծրագրերի հիմքում դնել ներքին և արտաքին գնահատման արդյունքները՝ ելնելով կրթական ծրագրերի առաջնահերթ կարիքներից, իրականացնել վերապատրաստումների արդյունավետության գնահատում:
5) Մշակել մեխանիզմներ՝ խթանելու երիտասարդ դասախոսներով քոլեջի համալրումը:
6) Գնահատել ուսումնաօժանդակ անձնակազմի կողմից կատարվող աշխատանքի արդյունավետությունը:

Հետազոտությունը և զարգացումը

1) Հստակեցնել ինչ է հետազոտություն բժշկա-հումանիտար քոլեջի համար:
2) Տեղական և համագործակից կառույցների հետ մշակել համատեղ հետազոտական ծրագրեր, ակտիվացնել կիրառական բնույթի հետազոտությունների իրականացումը:
3) Մշակել հետազոտական և ուսումնական գործընթացների փոխկապակցվածության հստակ մեխանիզմներ՝ ներգրավելով հետազոտական աշխատանքներում նաև ուսանողներին:

Ենթակառուցվածքը և ռեսուրսները

1) Քոլեջի ֆինանսական պլանավորումն ու ռեսուրսների բաշխումն իրականացնել՝ հաշվի առնելով ՌԾ նպատակներն ու խնդիրները, ՄԿԾ-ների պահանջները:
2) Բարելավել գրադարանային ֆոնդը, այն ավելացնելով նոր, հատկապես կրթական ծրագրերին առնչվող առավել թարմ գրականությամբ:
3) Ֆինանսական անկախության և կայունության նպատակով իրականացնել այլ ֆինանսական աղբյուրների որոնում, ֆինանսական մուտքերի դիվերսիֆիկացում, մասնակցել դրամաշնորհային ծրագրերի մրցույթների:
4) Ստեղծել և զարգացնել Քոլեջի պաշտոնական կայքէջը՝ նպատակ ունենալով ապահովել նաև հիմնական փաստաթղթաշրջանառությունը:

Հասարակական պատասխանատվությունը

1) ՄՈՒՀ-ի հաշվետվությունների կազմման հիմքում դնել վերլուծական մոտեցումը՝ դրանք կապելով ՌԾ-ի նպատակների և խնդիրների հետ և դիտարկել որպես ռազմավարական նպատակների կատարողականի գնահատման մեխանիզմ:
2) Գործարկել քոլեջի կայքը՝ ստեղծելով տեղեկատվության համապատասխան բաժիններ և հետադարձ կապի մեխանիզմներ,
3) Ներդնել հասարակության հետ հետադարձ կապի, հրապարակայնության կարիքների ուսումնասիրման գործող մեխանիզմներ,

4) Մշակել ընթացակարգեր՝ հասարակության հետ կապերի ձևավորման ուղղությամբ ՄՈՒՀ-ի կիրառած մեխանիզմների արդյունավետության և ձեռքբերումների գնահատման համար,
5) Մշակել և ներդնել հասարակությանը մատուցվող ծառայությունների կայուն համակարգ:

Արտաքին կապերը և միջազգայնացումը

1) Վերանայել Քոլեջի վերաբերմունքը միջազգայնացմանը, նշանակել միջազգայնացման համար պատասխանատու՝ ոլորտը համակարգելու և զարգացնելու համար:
2) Քայլեր ձեռնարկել տեղական և միջազգային կազմակերպությունների, համանման կառույցների հետ համագործակցելու ուղղությամբ, կնքել համագործակցության պայմանագրեր և իրականացնել դրանք ըստ պայմանագրի առարկայի:
3) Միջազգային շարժունությանը նպաստելու համար ապահովել անձնակազմի և ուսանողների օտար լեզվի իմացության բավարար մակարդակ:
4) Խրախուսել և ներգրավել ուսանողների բոլոր հնարավոր փորձի փոխանակման ծրագրերին նաև տալով նրանց հնարավորություն ինքնուրույն գտնել և դիմել իրենց համար օգտակար ուսանողական միջազգային ծրագրերի, որոնցում մասնակցությանը կաջակցի նաև քոլեջը:

Որակի ներքին ապահովման համակարգը

1) Վերանայել քոլեջի որակի ապահովման քաղաքականությունն ու ընթացակարգերը, կիրառվող մեխանիզմները և գործիքները, նպատակաուղղելով դրանք քոլեջի ռազմավարության և միջնաժամկետ ու կարճաժամկետ պլանների մշակմանը, դրանց կարարողականի բաձրացմանը, արդյունավետության գնահատմանը և բարելավման համար անհրաժեշտ տվյալների ստեղծմանը:
2) Ակտիվացնել փոխգործակցությունը ՄՈՒՀ-ի որակի ապահովման պատասխանատուի և այլ ստորաբաժանումների միջև՝ իրականացնելով լավագույն փորձի հայտնաբերում և տարածում:
3) Որակի ապահովման գործընթացներում ներգրավել ներքին և արտաքին շահակիցներին՝ պասիվ մասնակցությունից անցնելով գործընկերային ներգրավվածության:
4) Ստեղծել որակի ապահովման տվյալների հավաքագրման հստակ մեխանիզմներ և այդ մեխանիզմների կիրառման արդյունքում ստացված հավաստի տվյալների հիման վրա իրականացնել բովանդակային վերլուծություններ՝ ուղղված ՄԿԾ-ների և այլ գործընթացների բարելավմանը:
5) Ներդնել որակի ապահովման գործընթացների վերաբերյալ թափանցիկություն և հրապարակայնություն ապահովող հուսալի մեխանիզմներ ներքին և արտաքին շահակիցների համար:

Տիգրան Խաչատրյան
Փորձագիտական խմբի ղեկավարի ստորագրություն

Ամսաթիվ՝ 16.03.2020

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

Քոլեջի ինքնավերլուծության և որակի ապահովման գործընթացների արտաքին գնահատումն իրականացվել է փորձագիտական խմբի հետևյալ անդամների կողմից.

1. **Տիգրան Խաչատրյան՝** Ուսուցիչների կրթահամալիրի Որակի ապահովման բաժանմունքի պետ, ՀՀ, փորձագիտական խմբի ղեկավար,
2. **Ռոզա Հարությունյան՝** Արմավիրի պետական ինդուստրիալ-մանկավարժական քոլեջի ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ, ՀՀ, փորձագիտական խմբի անդամ,
3. **Վահե Բաբայանը՝** Մեհրաբյանի անվան բժշկական ինստիտուտի բժշկական քոլեջի ՈԱ ստորաբաժանման ղեկավար, ՀՀ, փորձագիտական խմբի անդամ,
4. **Նելլի Կարապետյանը՝** Հայկական բժշկական ինստիտուտի 4-րդ կուրսի ուսանող, ՀՀ, փորձագիտական խմբի ուսանող անդամ:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել են ՈԱԱԿ-ի Քաղաքականությունների մշակման և իրականացման բաժնի ավագ մասնագետ Լիլիթ Զաքարյանը:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է քոլեջի հետ և նշանակվել ՈԱԱԿ-ի տնօրենի որոշմամբ:

Փորձագիտական խմբի բոլոր անդամները ստորագրել են անկախության և գաղտնիության համաձայնագրեր:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դիմում պետական հավատարմագրման համար

Պետական ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար քոլեջը 2019 թ. հունվարի 22-ին ՈԱԱԿ ներկայացրել է սահմանված ձևաչափի դիմում-հայտ՝ լիցենզիայի և դրա հավելվածների կրկնօրինակներով:

ՈԱԱԿ-ի Քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները, կից փաստաթղթերը և հաստատության կողմից լրացված ՈԱԱԿ-ի էլեկտրոնային հարցաշարը: ՈԱԱԿ-ը կայացրել է դիմում-հայտի ընդունման մասին որոշում և կազմել ու հաստատել աշխատանքների իրականացման ժամանակացույց:

Նախապատրաստական փուլ

Քոլեջը, ըստ ՈԱԱԿ-ի կողմից սահմանած ձևաչափի, ներկայացրել է ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծություն և ուղեկցող փաստաթղթերի փաթեթ:

ՈԱԱԿ-ի համակարգողներն ուսումնասիրել են ինքնավերլուծությունը և կից փաթեթը՝ ՈԱԱԿ-ի պահանջներին համապատասխանությունը ստուգելու նպատակով: Քոլեջի ինքնավերլուծությունը և կից փաթեթը ՈԱԱԿ-ի կողմից ընդունվել է հավատարմագրման գործընթացի համակարգողների դրական կարծիքը ստանալուց հետո:

Ինքնավերլուծության զեկույցը նախնական գնահատման համար տրամադրվել է փորձագիտական խմբին, որի կազմը նախօրոք համաձայնեցվել է քոլեջի հետ և հաստատվել ՈԱԱԿ-ի տնօրենի հրամանով:

Փորձագիտական խումբն, ուսումնասիրելով քոլեջի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթն, իրականացրել է նախնական գնահատում, որի արդյունքում դուրս են բերվել քոլեջի հնարավոր ուժեղ և թույլ կողմերը: Ըստ ձևաչափի՝ պատրաստվել է լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես նաև պարզաբանման ենթակա խնդիրների և հարցերի ցանկ՝ նշելով համապատասխան ստորաբաժանումները և թիրախային խմբերը:

Նախատեսված ժամկետներում փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները, և գործընթացի համակարգողները փորձագիտական խմբի ղեկավարի հետ կազմել են փորձագիտական այցի ժամանակացույցը[2]: Առաջնորդվելով ՈԱԱԿ-ի Փորձաքննության իրականացման ձեռնարկով՝ ժամանակացույցում ներառվել են փորձագետների կողմից նախատեսվող հանդիպումները բոլոր խմբերի հետ, բաց և փակ հանդիպումներ, փաստաթղթերի ուսումնասիրություն, այցելություններ հաստատության ստորաբաժանումներ և այլն:

Նախնական այց

Հաշվի առնելով մայրաքաղաքից քոլեջի հեռավորությունը 2019 թ. դեկտեմբերի 9-ին քոլեջի տնօրենի հետ հեռախոսով և առցանց քննարկվել և համաձայնեցվել է փորձագիտական այցի ժամանակացույցը, քննարկվել են նաև կազմակերպչական և տեխնիկական ապահովվածության հարցեր: Նախնական այցը տեղի է ունեցել փորձագիտական այցի նախորդ օրը՝ 2019թ. դեկտեմբերի 10-ին: Հանդիպում է եղել Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջի տնօրենի հետ: Ուսումնասիրվել է փորձագիտական խմբին տրամադրվող սենյակը, հանդիպումների դահլիճը, քննարկվել են դրանց կահավորման ու տեխնիկական միջոցներով հագեցման խնդիրները:

Քննարկվել և փոխհամաձայնեցված որոշումներ են կայացվել փորձագիտական այցի կազմակերպչական, տեխնիկական, տեղեկատվական հարցերի, ինչպես նաև հանդիպումների մասնակիցների վարքագծի և էթիկայի նորմերի վերաբերյալ:

Փորձագիտական այց

Ժամանակացույցով նախատեսված այցին նախորդող օրը (10.12.2019թ.) փորձագիտական խմբի անդամները և համակարգող Լիլիթ Զաքարյանը ունեցել են փակ հանդիպում Վարդենիսում: Հանդիպման ընթացքում փորձագիտական խումբը համաձայնեցրել է փորձագիտական գնահատման շրջանակը, չափանիշների գնահատման սանդղակը, որն ըստ ՈԱԱԿ-ի ընթացակարգերի՝ ներառում է երկու մակարդակ՝ 1) բավարարում/համապատասխանում է չափանիշի պահանջներին, 2) չի բավարարում/համապատասխանում չափանիշի պահանջներին: Վերջնականացվել են այցի ընթացքում ուսումնասիրման ենթակա խնդիրները, հաստատության ուժեղ և թույլ կողմերն ըստ չափանիշների, ֆոկուս խմբային հանդիպումների ընթացակարգը, հանդիպումների վարման էթիկան, հստակեցվել են հետագա քայլերը:

Փորձագիտական այցը տեղի է ունեցել 2019թ.-ի դեկտեմբերի 11-ից 13-ն ընկած ժամանակահատվածում: Փորձագիտական այցը մեկնարկել և ավարտվել է քոլեջի տնօրենի հետ հանդիպմամբ: Հարցերի պարզաբանման նպատակով կազմակերպված ֆոկուս խմբային հանդիպումների՝ դասախոս, ուսանող, շրջանավարտ, գործատու, ինքնավերլուծություն իրականացրած աշխատանքային խմբի մասնակիցներին ընտրել է փորձագիտական խումբը՝ քոլեջի կողմից նախօրոք տրամադրված ցանկերից: Իրականացվել են ըստ ժամանակացույցի

[2] ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

նախատեսված բոլոր հանդիպումները: Այցի ընթացքում փորձագիտական խումբը փաստաթղթերի ուսումնասիրություն[3], ռեսուրսների դիտարկում[4] և ֆոկուս խմբային հանդիպումներ է իրականացրել, այցելել է պրակտիկայի վայրեր և հանդիպել Վարդենիսի քաղաքապետի հետ:

Փորձագիտական խումբը բարձր է գնահատում հանդիպման մասնակիցների հետ բաց և անկեղծ քննարկումները, որոնք մեծապես օգնել են քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների գնահատմանը:

Հանդիպումների ընթացքում ձեռքբերված տեղեկատվությունն, ինչպես նաև փաստաթղթերի ուսումնասիրության և դիտարկումների հիմնական արդյունքներն ամփոփվել են ամեն օրվա վերջում և այցի ավարտին կազմակերպված ամփոփիչ հանդիպման ժամանակ: Փորձագիտական խումբը քննարկել է հիմնական արդյունքները և եկել ընդհանուր համաձայնության՝ նախ հավատարմագրման առանձին չափորոշիչների, հետո նաև չափանիշների պահանջների բավարարման վերաբերյալ: Չափանիշների բավարարման վերաբերյալ վերջնական եզրակացությունները ձեռք են բերվել խմբի բոլոր անդամների կողմից բաց քննարկման միջոցով՝ կիրառելով կոնսենսուսի սկզբունքը:

Փորձագիտական զեկույց

Փորձագիտական այցից հետո փորձագիտական խումբը քննարկումների արդյունքում պատրաստել է հավատարմագրման զեկույցը, որը կազմելիս հիմնվել է քոլեջի ինքնավերլուծության գնահատման և փորձագիտական այցի դիտարկումների վրա: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959-Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով: Խմբի ղեկավարը գործընթացի համակարգողի օժանդակությամբ պատրաստել է հավատարմագրման զեկույցի նախնական տարբերակը: Փորձագիտական խմբի բոլոր անդամներն իրենց ներդրումն են ունեցել զեկույցի յուրաքանչյուր չափանիշի վերաբերյալ դիտարկումների շարադրման գործում, ինչպես նաև արձագանքել ամբողջական տարբերակին: Փորձագիտական խմբի անդամների մեկնաբանությունները հաշվի են առնվել զեկույցի նախնական տարբերակի ամփոփման ժամանակ:

Լիլիթ Զաքարյան,
Գործընթացի համակարգող

16.03.2020 թ.

[3] ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

[4] ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՎԱՐԴԵՆԻՍԻ ԲԺՇԿԱ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋԸ հիմնվել է 2012թ.-ին: ՀՀ Առողջապահության նախարարության կողմից, տրվել է անժամկետ լիցենզիա /Կ-ԲԿ-000061/: 2014թ. Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջը վերալիցենզավորվել է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից, ստացել 0022 սերիայի անժամկետ լիցենզիա, որով իրավունք է ստացել իրականացնել միջին մասնագիտական կրթական ծրագրեր:

Ներկայումս «Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջ» ՍՊԸ-ն կրթություն է կազմակերպում հետևյալ 4 միջին մասնագիտության կրթական ծրագրերով.

1. «Դեղագործություն»
2. «Քույրական գործ»
3. «Բուժական կոսմետոլոգիա»
4. «Գրադարանային գործ»:

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

Ի. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

ՓԱՍՏԵՐ

1.1 ՄՈՒՀ-ն ունի նպատակներն ու խնդիրներն արտացոլող հստակ ձևակերպված առաքելություն, որը համահունչ է ՈԱՇ-ին:

«Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջ» ՍՊԸ-ն իր գործունեությունն իրականացնում է կանոնադրության և ռազմավարական ծրագրի (այսուհետ՝ ՌԾ) հիման վրա: Քոլեջի առաքելությունը, նպատակներն ու խնդիրները սահմանված են ռազմավարական ծրագրում: Քոլեջը, լինելով սահմանամերձ գոտում գործունեություն ծավալող կրթական հաստատություն, իր առաքելությունն է համարում իրականացնել միջին մասնագիտական կրթական ծրագիր Վարդենիսի համայնքների դպրոցականների համար, որտեղ բժշկական կադրերի պակաս կա: Քոլեջն առաջարկում է համեմատաբար ցածր ուսման վարձավճարներ և տրամադրում է տրանսպորտային միջոց ուսանողների տեղափոխման համար: Քոլեջը հիմնականում սպասարկում է տարածաշրջանի կարիքները՝ պատրաստելով բուժքույրեր, դեղագործներ, բուժական կոսմետոլոգներ, գրադարանավարներ, սակայն կարիքների բացահայտման մեխանիզմները հստակ մշակված չեն: Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ քոլեջի դերակատարումը արտաքին շահակիցների կողմից /քաղաքապետ, բուժհիմնարկներ/ կարևորվում է, քանի որ տարածաշրջանում առողջապահության ոլորտում կա կադրերի պակաս:

Քոլեջի առաքելությանը համահունչ՝ ռազմավարական պլանով նախատեսվել են հետևյալ ռազմավարական առաջնահերթությունները (ուղղությունները)՝ 1. դիմորդներ և ուսումնառողներ, 2. որակյալ կրթություն, 3. ֆինանսական կայունություն, արդյունավետ կառավարում, ժամանակակից ենթակառուցվածք, 4. որակի ապահովում, 5. որակյալ կադրային ներուժ: ՌԾ-ում յուրաքանչյուր նպատակին հասնելու համար սահմանված են խնդիրները և դրանց հասնելու համար անհրաժեշտ քայլերը, սակայն բացակայում են խնդիրների լուծման և նպատակներին հասնելու համար առաջընթացի գնահատման ցուցիչները: ՌԾ որոշ նպատակների էությունը մասամբ նույնն է (նպատակ 2՝ որակյալ կրթություն, նպատակ 4՝ որակի ապահովում): ՌԾ-ում ներկայացված են քոլեջի հեռապատկերը, մնայուն արժեքները, գործունեության սկզբունքները: Թեև նշված է ՌԾ ընթացիկ մշտադիտարկման անհրաժեշտությունը որպես ՌԾ կատարման և գնահատման եղանակ, սակայն ՌԾ մոնիթորինգ երբևէ չի արվել:

Քոլեջի առաքելության և ՈԱՇ-ի համահունչության ապահովման տեսանկյունից, մշակվել և ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից հաստատվել են մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչներ, որոնց հիման վրա էլ տրամադրվում է մասնագիտական կրթություն:

1.2 ՄՈՒՀ-ի առաքելությունը, նպատակները և խնդիրներն արտացոլում են ներքին և արտաքին շահակիցների կարիքները:

Քոլեջում արտաքին և ներքին շահակիցների կարիքների վերհանման համար իրականացվում են մի շարք հարցումներ: Մշակվել է «Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջի ներքին շահակիցների բավարարվածության հարցման կանոնակարգ», «Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջի շրջանավարտների վերաբերյալ արտաքին շահակիցների կարծիքի ուսումնասիրության կանանակարգ», «Քոլեջի առաքելության, սահմանված նպատակների և խնդիրների վերանայման քաղաքականություն», իրականացվել են մի շարք հարցումներ արտաքին և ներքին շահակիցների շրջանում, սակայն դրանց վերաբերյալ վերլուծություններ չկան: Նշված կանոնակարգերում և քաղաքականությունում արտացոլվում են քոլեջում ռազմավարական պլանավորման սկզբունքները, մոտեցումները, ինչպես նաև ընթացակարգը և շահակիցների ներգրավման ձևերը: Նշված են շահակիցների ներգրավման եղանակները, սակայն փորձագիտական այցը ցույց տվեց, որ արտաքին շահակիցները ներգրավված չեն եղել քոլեջի առաքելության, նպատակների և խնդիրների մշակման գործընթացում, չնայած, որ քոլեջն իր ԻՎ-ում նշել է որ «Քոլեջի առաքելության և նպատակների վերանայումը բխում է ներքին և արտաքին շահակիցների նպատակներից. աշխատաշուկայի պահանջներից, ուսանողական հավաքակազմի ընդլայնման անհրաժեշտությունից»:

ՌԾ-ի մշակմանը արտաքին շահակիցները գործուն մասնակցություն չեն ունեցել: Ներքին շահակիցների ներգրավվածությունը ՌԾ քննարկման գործընթացում իրականացվել է տնօրինական, մանկավարժական խորհուրդներում նրանց մասնակցությամբ: Խնդիրները պարբերաբար քննարկվում են տնօրինական, մանկավարժական խորհուրդներում:

Փորձագիտական հանդիպումների ընթացքում պարզ դարձավ, որ արտաքին շահակիցները շահագրգռված են մասնակցություն ունենալ քոլեջի գործունեության տարբեր ոլորտներում:

1.3 ՄՈՒՀ-ում գործում են առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների՝ գնահատման և բարելավման հաստատված մեխանիզմներ և ընթացակարգեր:

Քոլեջի առաքելության ու նպատակների իրականացման ընթացքը գնահատելու նպատակով կիրառվում է ստորաբաժանումների և կոլեգիալ կառավարման համար ստեղծված (ուսումնական մաս, ամբիոններ, դասղեկներ, տնօրինական խորհուրդ,

մանկավարժական խորհուրդ և այլն) հաշվետվությունների համակարգը: Հաշվետություններից քոլեջը կարևորում է հատկապես ուսումնական մասի տարեկան զեկույցները ուսումնառողների առաջադիմության և ուսման որակական ցուցանիշների վերաբերյալ: Հաշվետությունները քննարկվում են տնօրինական և մանկավարժական խորհրդի նիստերում: Սակայն փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ քննարկվող հաշվետվությունները միշտ չէ, որ կապ ունեն ՌԾ կատարողականի հետ:

Մշակվել և հաստատվել է «Ռազմավարական ծրագրի իրականացման վերանայման քաղաքականություն»-ը, որը դեռևս չի իրականացվում սահմանված սկզբունքներին համապատասխան:

Թեև ԻՎ-ում նշվում է, որ «Ռազմավարական ծրագրի իրականացումը և որակի ապահովմանը նպաստող մեխանիզմներ են ներքին և արտաքին շահակիցների կարիքների, պահանջների բացահայտումը և այդ պահանջների բարելավումը, որոնք ինքնին նպաստում են շարունակական բարելավմանը», սակայն, փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ դեռևս այս մեխանիզմը չի գործում և չկան արտաքին և ներքին շահակիցների կարիքների բացահայտմանն ուղղված ուսումնասիրություններ:

Հաշվետվությունները հիմնականում արձանագրում են կատարված աշխատանքները, խնդիրները և փաստերը: Նկարագրված չեն այն մեխանիզմները կամ գործիքները, որոնցով բարելավվում են արձանագրված խնդիրները: Մինչ այժմ չի գնահատվել և վերլուծվել, թե ՌԾ-ով ամրագրված առաքելության և նպատակների իրականացումը որ փուլում է:

ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ: Քոլեջի ՌԾ-ում սահմանված առաքելությունը ընդհանուր առմամբ հստակ է և համապատասխանում է ՌԱՇ-ին, իսկ ՄՈՒՀ-ի վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը: Սահմանամերձ տարածաշրջանում բժշկական կրթությամբ կադրերի պատրաստման կրթական հաստատություն լինելը (որոշ մասնագիտությունների դեպքում միակը) նպաստում է նաև քոլեջի նպատակների և խնդիրների ձևակերպմանը, որոնք արտացոլված են 2016-2026թթ. ՌԾ-ում:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջի ռազմավարական ծրագրի վերլուծության համար մշակվել է համապատասխան ընթացակարգ, սակայն այն դեռևս գործողության մեջ չի դրվել: Միաժամանակ, առկա է ռազմավարական ծրագրի նպատակների իրականացման ցուցիչների բացակայություն, որն էլ ռիսկային է դարձնում քոլեջի զարգացման գնահատման օբյեկտիվությունը: ՌԾ-ի իրականացման համար հստակ մշակված ուղենիշները, որտեղ նշված կլինեն ծրագրի իրականացման խնդիրները և դրանցից բխող քայլերը, կօգնեն քոլեջին գործել առավել նպատակաուղղված:

Որոշակիորեն ընգծված է ներքին շահակիցների մասնակցությունը ՌԾ մշակման գործընթացում, սակայն արտաքին շահակիցների ընդգրկվածությունը դեռևս արդյունավետ չէ: Այս հարցին հետևողական մոտեցում ցույց չտալու դեպքում, կարող են խնդիրներ առաջ գալ քոլեջի նոր կրթական ծրագրերի արդյունավետությունը բարձրացնելու և տարածաշրջանի աշխատաշուկայի հետ համագործակցությունն ապահովելու առումով: Փորձագիտական խումբը արձանագրում է, որ այն գործատուները և արտաքին շահակիցները, ում հետ հանդիպումներ են եղել այցի ընթացքում, հստակ գիտակցում են տարածաշրջանի համար քոլեջի առաքելության կարևորությունը և մանրամասնում այն:

Այս առումով ևս քոլեջը խնդիր ունի առաքելության վերաձևակերպման տեսանկյունից, քանի որ առաքելությունը ամբողջովին չի ընդգրկում քոլեջի իրականացրած գործունեությունը: Փորձագիտական խմբի կողմից դրական է գնահատվում այն, որ ոլորտի գործատուների հետ արդեն իսկ համագործակցություն սկսվել է: Որպես շահակիցների կարիքների վերհանման մեխանիզմ մշակված են հարցումների անցկացման ընթացակարգեր, որոնք լրամշակման կարիք ունեն: Չնայած այն բանին, որ մշակվել են տարբեր

կանոնակարգեր, ընթացակարգեր՝ փորձագիտական խումբը միաժամանակ նշում է, որ առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման և բարելավման քոլեջի առանձնահատկությունները ընդգծող ընթացակարգերի սակավությունը խոչընդոտ կարող է հանդիսանալ արդյունավետ ռազմավարական զարգացումն ապահովելու գործում:

Անհրաժեշտ է վերանայել ՌԾ-ն՝ սահմանելով առաջընթացի գնահատման ցուցիչներ և նպատակների իրագործման համար անհրաժեշտ ռեսուրսներ, այլապես վտանգված կլինի ՌԾ հետագա արդյունավետությունը:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ՝ Հաշվի առնելով քոլեջի առաքելության և նպատակների ՈԱՇ-ին համապատասխանությունը, ինչպես նաև ձևակերպված առաքելության առկայությունը, դրանից բխող նպատակները և դրանց հասնելու ուղղությամբ պլանավորված քայլերը, յուրաքանչյուր քայլի համար նախատեսված իրագործելի խնդիրները, փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջի ծավալած գործունեությունը հիմնականում համապատասխանում է առաքելությանը, ներքին շահակիցները մասնակցություն ունեն ռազմավարական ծրագրի մշակման և իրագործման փուլերում, արտաքին շահակիցները կարևորում են քոլեջի առաքելությունը: Հաշվի առնելով այս ամենը փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը հիմնականում բավարարում է չափանիշ 1-ի պահանջները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝ Փորձագիտական խումբը Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 1-ի պահանջներին գնահատում է բավարար:

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործունեությունն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

ՓԱՍՏԵՐ

2.1 Հաստատության կառավարման համակարգն ապահովում է որոշումներ կայացնելու կանոնակարգված գործընթաց՝ սահմանված էթիկայի կանոններին համապատասխան. և ունի կրթական ու այլ նպատակների իրականացման համար անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

Քոլեջի կառավարումն իրականացվում է ՀՀ օրենսդրության, ենթաօրենսդրական ակտերի և կանոնադրության համապատասխան, ինքնակառավարման հիման վրա՝ միանձնյա ղեկավարման և կոլեգիալության սկզբունքների զուգակցմամբ: Քոլեջի միանձնյա ղեկավարումն իրականացնում է տնօրենը, իսկ կոլեգիալ կառավարման մարմիններն են տնօրինական խորհուրդը և մանկավարժական խորհուրդը, որոնք հանդես են գալիս նաև որպես խորհրդակցական մարմիններ: Քոլեջի ներքին շահակցիները (դասախոս, ուսանող և այլն) ներկայացված են կառավարման համակարգում:

Քոլեջում գործում են համապատասխան գործառույթների իրականացման համար անհրաժեշտ ստորաբաժանումներ և կառույցներ. ամբիոններ, կարիերայի կենտրոն, ուսանողական խորհուրդ և այլն, որոնց գործունեությունը համակարգման կարիք ունի: Փորձագիտական խմբի այցի ընթացքում պարզվեց, որ որոշ ստորաբաժանումներ և կառույցներ թեև ունեն գրված կանոնակարգեր կամ կանոնադրություններ, բայց դրանով չեն առաջնորդվում (մասնավորապես ուսանողական խորհուրդը և կարիերայի կենտրոնը): Քոլեջի կազմակերպչական կառուցվածքում առկա է պրակտիկայի բաժինը, որը պետք է համակարգի պրակտիկայի անցկացման ընթացքը, սակայն այցի ընթացքում պարզվեց, որ բաժինն իրականում չունի մարդկային նշված ռեսուրսները, իսկ բաժնի վարիչի հաստիքը

հատկացված էր գրադարանավարին, որը լրացուցիչ ծանրաբեռնվածություն է առաջացնում: Կառուցվածքային սխեմայում նշված է բաժնի վարիչ կառուցամասը, որն իրականում չկա: Փորձագիտական այցը ցույց տվեց, որ կազմակերպչական կառուցվածքը չի ապահովում կառավարման համապատասխան հիերարխիան՝ բաժինները և ամբիոնները, մեթոդիստը կազմակերպչական կառուցվածքում միայն համագործակցության դաշտում են վերադաս ստորաբաժանումների համար և ըստ ենթակայության չկա համակարգված հաշվետվողականության մեխանիզմ:

Կրթական և այլ գործընթացների իրականացման համար քոլեջը տրամադրում է մարդկային և նյութական ռեսուրսներ՝ անհրաժեշտության դեպքում ներգրավելով պայմանագրային հիմունքներով դասախոսների, մասնագետ բժիշկների և այլ աշխատակիցների: Ստորաբաժանումներին անհրաժեշտ միջոցների վերհանում չի իրականացվում, տարեկան եկամուտների և ծախսերի նախահաշիվը չի ներկայացվում արտաքին և ներքին շահակիցներին:

Քոլեջում առկա մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների բավարարվածության վերաբերյալ ամբողջական վերլուծություններ չկան: Կառավարման համակարգի արդյունավետության գնահատման վերլուծություններ նույնպես չեն իրականացվում:

2.2 ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը հնարավորություն է տալիս դասախոսներին և ուսանողներին մասնակցնելու իրենց առնչվող որոշումների կայացմանը:

Համաձայն իրավական փաստաթղթերի՝ դասախոսները և ուսանողներն ունեն հնարավորություն քոլեջի կառավարման համակարգում մասնակցելու իրենց առնչվող որոշումների կայացմանը: Քոլեջի մանկավարժական խորհրդի իրավասության և գործունեության կարգում նշված է, որ անդամների թվում պարտադիր պետք է լինի նաև ուսանողական խորհրդի նախագահը: Փորձագիտական խմբի այցի ընթացքում պարզվեց, որ ուսանողները երբեմն բարձրացնում են հարցեր, որոնք լուծում ստանում են, բայց այս գործընթացը կանոնակարգված չէ և կոլեգիալ կառավարման մարմիններում ուսանողների կողմից բարձրացված հարցերը չեն քննարկում: Նիստերի արձանագրությունների, մատյանների ուսումնասիրության արդյունքում ուսանողների կողմից բարձրացված և քննարկված հարցեր չհայտնաբերվեցին:

ԻՎ-ում նշված է, որ «Դասախոսների և ուսանողների ներգրավվածությունը առավել արդյունավետ է դարձնում կառավարման գործընթացն այնքանով, որ բացահայտվում են նրանց կարիքները, պահպանվում աշխատողների և ուսումնառողների շահերն ու իրավունքները, որոշակի և տեսանելի են դառնում հիմնախնդիրները», սակայն փորձագիտական այցը ցույց տվեց, որ որակի ներքին ապահովման ենթակառուցվածքին կից երեք հանձնաժողովներից ուսանողականի վերաբերյալ ուսանողները տեղեկացված չէին, և հանձնաժողովը կրում էր ֆորմալ բնույթ:

Կառավարման գործընթացներում ներգրավված են միայն հիմնական աշխատողները, իսկ պայմանագրային հիմունքներով աշխատող դասախոսների մասնակցությունը ցածր է:

2.3 ՄՈՒՀ-ը մշակում և իրականացնում է կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորում՝ իր առաքելությանն ու նպատակներին համապատասխան, և ունի դրանց իրականացման և մշտադիտարկման հստակ մեխանիզմներ:

Քոլեջը պլանավորումն իրականացնում է 2 մակարդակում: Որպես երկարաժամկետ պլանավորում դիտարկվում է ՌԾ-ն: Միջնաժամկետ գործողությունների համար քոլեջը առանձնացնում է՝ կատարման ռազմավարական կարճաժամկետ ծրագրի ժամանակացույց-պլանը՝ ըստ ուսումնական տարիների, որը չի ծածկում ՌԾ նպատակներն ու դրանցից բխող խնդիրները:

Քոլեջի ստորաբաժանումների գործողությունների կարճաժամկետ ծրագրերը արտացոլվում են իրենց տարեկան կամ կիսամյակային աշխատանքային պլաններում, որոնց հիմքում, սակայն, չի դրվում ՌԾ-ն: Պլանների իրականացումն արտահայտվում է հաշվետվությունների մեջ, որոնցում չի վերլուծվում ՌԾ-ի կատարումը, ռազմավարական նպատակների և խնդիրների իրականացումը: Թեև քոլեջն ԻՎ-ում նշում է, որ «Ռազմավարական ծրագրերը կանոնակարգում են գործառույթները և դարձնում նպատակաուղղված: Առկա են բոլոր կառավարող մարմինների, ՊԴ և ՈԻՕ աշխատողների աշխատանքային պլանները, որոնք նպաստում են հաստատության, առաքելության արդյունավետ իրականացմանը՝ քայլ առ քայլ պլանավորված ձևով», իրականում քոլեջը դեռևս չունի կառուցվածքային ստորաբաժանումների հաշվետվողականության միասնական կարգ, որի առկայությունը էապես կփոխեր հաշվետվողականության ընթացքը քոլեջում:

Փորձագիտական խմբի այցից պարզվեց, որ պլանների իրականացման մշտադիտարկման կանոնակարգված գործընթացը բացակայում է: Քոլեջում պլանների մշտադիտարկումն իրականացվում է ըստ հաշվետվությունների, որոնք դեռևս վերլուծական բաղադրիչ չեն պարունակում, այլ հիմնականում նկարագրողական բնույթի են, չկան բարելավման վերաբերյալ առաջարկներ:

2.4 ՄՈԻՀ-ը կատարում է իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրություն և որոշումներ կայացնելիս հիմնվում է հավաստի տվյալների վրա:

Քոլեջում դեռևս չի իրականացվում իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրություն, սակայն առկա են որոշակի հարցումներ արտաքին և ներքին շահակիցների շրջանում: Թեև առկա է հարցումների անցկացման մի քանի ընթացակարգ, այնուամենայնիվ, հարցումները պարբերական բնույթ չեն կրում և փորձագիտական խմբին չի տրամադրվել հարցումների արդյունքների վրա հիմնված որևէ վերլուծություն: Իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրությունների պլանավորման, իրականացման հստակ ընթացակարգեր քոլեջում առկա չեն: Հարցումների հավաստիության աստիճանը հիմնավորելու նպատակով քոլեջի գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրության այլ մեթոդներ չեն կիրառվում, մասնավորապես՝ առկա իրավիճակի բազմակողմանի վերլուծություններ, արձանագրված բաց քննարկումներ և այլն: Թեև տվյալների ստացման և օգտագործման որոշակի մեխանիզմներ առկա են, սակայն դրանց հավաստիության գնահատում չի արվում: Արտաքին միջավայրի վերլուծությունները սակավաթիվ են: Բացակայում են աշխատաշուկայի վերլուծություններ՝ որոշումների կայացման և հետագա գործունեության պլանավորման համար:

Քոլեջում ուսուցման որակի վրա ազդող գործոնների բացահայտման նպատակով իրականացվել են հարցումներ ներքին և արտաքին շահակիցների որոշ խմբերի շրջանում: Հարցումներում ներառնված գործոնների ուսումնասիրությունները չեն դրվել ՌԾ-ի մշակման հիմքում:

2.5 Քաղաքականությունների և ընթացակարգերի վարչարարությունն իրականացվում է որակի կառավարման սկզբունքով (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում):

ԻՎ-ում ՄՈԻՀ-ը հայտարարում է, որ իր քաղաքականության և ընթացակարգերի վարչարարությունն իրականացնում է որակի կառավարման սկզբունքով՝ պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում: Սակայն փաստաթղթերի ուսումնասիրությունն ու փորձագիտական այցի ընթացքում իրականացված դիտարկումները փաստեցին, որ քոլեջում ՊԻՍԲ շրջափուլը քոլեջի գործունեության մեջ ներդրված չէ: Կառավարման գործընթացները գտնվում են պլանավորման, մասամբ իրականացման փուլում:

2.6 ՄՈԻՀ-ում գործում են մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության հավաքագրումը, վերլուծությունը և կիրառումը գնահատող մեխանիզմներ:

Թեև ԻՎ-ում նշվում է, որ «Քոլեջում գործում են մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության գնահատման մեխանիզմներ, որոնց արդյունքում հավաքագրվում է որոշակի տեղեկատվություն, իսկ տեղեկատվության համապատասխան վերլուծությունը բացահայտում է և գնահատվում գործընթացների արդյունավետությունը», սակայն փորձագիտական այցը ցույց տվեց, որ կատարվում են միայն որոշակի հարցումներ, որոնք թիրախավորված չեն ըստ ՌԾ-ի: Հարցումների արդյունքների բովանդակային և համակարգային վերլուծություններ չեն իրականացվում: Առավել ևս չեն ներդրվել հարցումների արդյունավետության գնահատման մեխանիզմներ: Հաշվետվությունների արդյունավետության գնահատում նույնպես չի իրականացվում: ԻՎ-ն դեռևս վերլուծական բնույթ չի կրում, կան չափորոշիչներ, որոնց վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը չի անդրադառնում պահանջված ոլորտին:

Քոլեջում չեն իրականացվել կրթական ծրագրերի մոնիթորինգ և վերանայում, չկա գործընթացը կանոնակարգող ընթացակարգ կամ կարգ:

2.7 ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները գնահատող օբյեկտիվ մեխանիզմներ:

Քոլեջում գործող ՍԿԾ-ների և շնորհվող որակավորումների մասին տեղեկատվությունը տարածելու հիմնական գործիքը համարվում է ֆեսբուքյան համացանցային հարթակը, դեռևս չի գործում քոլեջի կայքէջը: Փորձագիտական այցի ընթացքում հաստատվեց, որ «Դիմորդների մասնագիտական կողմնորոշման աշխատանքներում կիրառվում են աշխատակազմի գործուղումները դպրոցներ, հայտարարություններ ԶԼՄ-ներով, տեղեկատվական տեխնոլոգիաներով և «Բաց դռների օր» միջոցառումները, բուկլետների տարածումը»: Շնորհվող որակավորումների որակի մասին քանակական և որակական գնահատման համար կիրառվում են քոլեջում գործող հաշվետվությունները և ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների հաշվետվությունները, սակայն կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները գնահատող հստակ և օբյեկտիվ մեխանիզմներ չկան:

ԴԱՍՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջի կազմակերպական կառուցվածքում կատարվել են որոշ փոփոխություններ (ՈՆԱ, կարիերայի կենտրոն), որոնք միտված են կառավարման համակարգի կատարելագործմանը, սակայն համակարգը դեռևս հետագա բարեփոխումների կարիք ունի: Կառավարման համակարգը անմիջականորեն կապված չէ ռազմավարական խնդիրների և նպատակների հետ:

Չնայած այն բանին, որ գործում են միջին մասնագիտական ուսումնական հաստատությանը բնորոշ հիմնական ստորաբաժանումներ, առկա է կազմակերպչական կառույցների ոչ արդյունավետ տեղաբաշխում, որը քոլեջի առաքելության և հիմնական նպատակների իրականացման համար ռիսկային է: Մասնավորապես, արդյունավետ չէ ունենալ ոչ բավարար ռեսուրսներով գործող ստորաբաժանում (պրակտիկայի բաժին) կամ ավելորդ կառավարման օղակներ (իրավակարգապահական հանձնաժողով):

Քոլեջի որոշումներ կայացնող կառույցներում արտաքին շահակիցների թույլ ներգրավվածությունը կարող է սահմանափակել արտաքին պահանջների և զարգացումների վերաբերյալ իրազեկվածությունը: Արտաքին միջավայրի սակավաթիվ վերլուծությունները կհանգեցնեն քոլեջի գործունեության ոչ ճիշտ պլանավորման և ռազմավարական զարգացման հետագա ռիսկերի: Դասախոսների և, հատկապես, ուսանողների թույլ ակտիվությունը քոլեջի որոշումներ կայացնելու գործընթացում իր հերթին նվազեցնում է նրանց կողմից խնդիրների վերհանմանն ու դրանց լուծմանը նրանց ներգրավումը և ազդում է մոտիվացիայի վրա:

Փորձագիտական խումբը դրական է համարում քոլեջում իրականացված մի շարք հարցումները, որոնց միջոցով վեր են հանվել որոշակի խնդիրներ: Սակայն, կատարված հարցումներից բացի, քոլեջի գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրության այլ հավաստի մեթոդների և վերլուծությունների բացակայությունը բավականին նեղացնում է իրավիճակի իրատեսական գնահատման հնարավորությունները: Հիմք ընդունելով ՌԾ նպատակները՝ քոլեջը կարիք ունի բարելավել իր կառավարման համակարգը և օպտիմալացնել կազմակերպչական կառուցվածքը՝ դրանք դարձնելով առավել արդյունավետ և իր ռազմավարությանն ու գործունեությանն ավելի համահունչ: Քոլեջում հավաքագրվող տեղեկատվության վերլուծությունների բացակայությունը ռիսկային է կրթական ծրագրերի բարելավման տեսակետից:

Քոլեջի կառավարման համակարգը ֆորմալ առումով հնարավորություն տալիս է դասախոսներին և ուսանողներին մասնակցել որոշումների կայացմանը: Կարևորագույն դեր է հատկացված տնօրինական, մանկավարժական խորհուրդներին, որտեղ քննարկվում և կայացվում են բոլոր կարևոր որոշումները: Սակայն դիտարկումները ցույց տվեցին, որ ուսանողների փաստացի մասնակցությունը որոշումների կայացման գործընթացին բավական պասիվ է: Ուսանողների ձայնի ոչ լիարժեք արտահայտումը կարող է վտանգել ընդունած որոշումների ուղղվածությանը նրանց կարիքներին և ուսանողակենտրոնությանն ընդհանրապես: Մյուս կողմից, փորձագիտական խումբը դրական է գնահատում ՄՈՒՀ-ի ղեկավարության ջանքերն ուսանողների հետ անմիջական կապերի հաստատման և բաց քննարկման դաշտ բերելու ուղղությամբ:

Քոլեջում գործող պլանավորման գործընթացը կանոնակարգված չէ: ՌԾ-ի և կարճաժամկետ պլանների միջև ոչ հստակ կապը, ՌԾ-ի առաջընթացի ցուցիչների բացակայությունը, քոլեջի առաջընթացի վերլուծման բացակայությունը ցույց են տալիս, որ ՌԾ-ն դեռևս չի հանդիսանում գործունեության ուղղորդող հիմնական փաստաթուղթ: Ստորաբաժանումների համար ՌԾ-ն դեռևս որպես ռազմավարական զարգացման փաստաթուղթ չի ընկալվում: Վերջիններիս հաշվետվություններում վերլուծական բաղադրիչի բացակայությունը խոչընդոտում է արդյունավետության գնահատմանը:

Չնայած քոլեջը դեռևս չի իրականացնում իր վրա ազդող ներքին և արտաքին գործոնների ամբողջական համակարգված ուսումնասիրություններ, սակայն քոլեջի ղեկավարության անձնական ջանքերը նպաստում են ծառացած մարտահրավերների վերաբերյալ հավաստի տվյալների հայթայթմանը, ուստի փորձագիտական խումբը կարծում է, որ ինստիտուցիոնալ առումով այս գործընթացները թիրախավորման և կանոնակարգման կարիք ունեն:

Որակի կառավարման ՊԻՍԲ սկզբունքը քոլեջի քաղաքականության և ընթացակարգերի վարչարարության մեջ դեռևս չի արմատավորվել՝ պայմանավորված այդ սկզբունքի իրականացման պահանջները պարունակող փաստաթղթային հիմքերի ներդրված չլինելու հետ: Գնահատման և բարելավման փուլերը համարյա բոլոր ընթացակարգերում տեսանելի չեն, ինչը թույլ չի տալիս հաստատությանը հիմնավորել, որ կառավարման որոշումները կայացվում են բավարար և հավաստի տվյալների վերլուծության հիման վրա, և առկա են շարունակական բարելավման գործընթացներ:

Քոլեջը մինչ այժմ չի իրականացրել կանոնակարգված գործընթաց՝ կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման, վերլուծման և կիրառման գնահատման ուղղությամբ:

Քոլեջը, գիտակցելով հանդերձ կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին տեղեկատվության հավաքագրման և վերլուծության մեխանիզմների անկատարությունը, դեռևս գործուն քայլեր չի նախաձեռնում այդ ուղղությամբ: ՄԿԾ և շնորհվող որակավորումների որակի մասին օբյեկտիվ և հիմնավոր տեղեկատվության հրապարակումները կնպաստեին հասարակական վստահության և քոլեջի վարկանիշի աճին:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ: Փորձագիտական խումբը գտնում է, որ Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջը չի բավարարում չափանիշ 2-ի պահանջները՝ հաշվի առնելով, որ կազմակերպական կառուցվածքը համապատասխանեցված չէ քոլեջի ռազմավարական խնդիրների իրականացմանը, առկա է կառավարչական ռեսուրսների օպտիմալ տեղաբաշխման խնդիր, առկա չեն կառավարման համակարգի արդյունավետության վերլուծություններ, թույլ է արտաքին շահակիցների մասնակցությունը կառավարման գործընթացներին, կառավարման համակարգում թույլ են հետադարձ կապի մեխանիզմները, մշակված փաստաթղթերը առավել արդյունավետ գործելու նպատակով վերանայման կարիք ունեն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ: Փորձագիտական խումբը Վարդենիսի բժշկահումանիտար քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 2-ի պահանջներին գնահատում է անբավարար:

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

ՓԱՍՏԵՐ

3.1 ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը համահունչ են հաստատության առաքելությանը, համապատասխանում են պետական կրթական չափորոշիչներին, մանրամասն նկարագրված են՝ ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող ուսումնառության արդյունքների:

Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջում իրականացվում է միջին մասնագիտական 4 ծրագիր: Այդ մասնագիտությունների համար կան հաստատված պետական կրթական չափորոշիչներ: Որպես ՄԿԾ-ի մշակման հիմք քոլեջը ղեկավարվում է իր առաքելությունը, տարածաշրջանի պահանջներն ու ՈԱՇ-ին համապատասխանությունը: Քոլեջի կրթական ծրագրերը ընդհանուր առմամբ համահունչ են առաքելությանը, որում քոլեջը շեշտադրում է կատարում բժշկագիտական մասնագիտությունների վրա, որոնք ավելի մեծ պահանջարկ ունեն աշխատաշուկայում և առհասարակ հանրության շրջանում: Փորձագիտական խմբի այցի ընթացքում գործատուների և Վարդենիսի քաղաքապետի հետ հանդիպումների ընթացքում պարզ դարձավ, որ տարածաշրջանը իսկապես կարիք ունի բժշկական կրթությամբ մասնագետների, քանի որ թե՛ պատերազմական, թե՛ սոցիալական և տարածաշրջանում բնակավայրերի միմյանցից հեռու գտնվելը, ձմռան ամիսներին դժվարամատչելի լինելը, ստիպում են ունենալ բժիշկ մասնագետներ տեղերում: Զինվորական հոսպիտալ այցը ցույց տվեց, որ նշված մտահոգությունը տեղին է, քանի որ բռնկումների դեպքում իրենք չունեն համապատասխան քանակով անձնակազմ, իսկ 2016թ. տարածաշրջանում համաճարակի բռնկման ժամանակ իրենց օգնել են հենց քոլեջն ավարտած կամավորները տարբեր գյուղերից: 10-ից ավելի կամավոր մասնակցել է նաև Ապրիլյան պատերազմի օրերին զինվորական հոսպիտալում միջամտությունների ժամանակ:

«Գրադարանային գործ» մասնագիտության առկայությունը քոլեջը հիմնավորում է տարածաշրջանի կարիքների ուսումնասիրությամբ: Բաժինը ստեղծվել է այն ժամանակ, երբ ԿԳՆ տեսչական ստուգման արդյունքում պարզվել է, որ մարզի դպրոցների 70 տոկոսը գրադարավարներ չունի:

ՄԿԾ-ներում ներկայացված չեն ընդհանրական վերջնարդյունքները ըստ շնորհվող որակավորումների: Մշակվել է «ՄԿԾ առաջավոր փորձի համեմատական վերլուծության

(բենչմարքինգի) քաղաքականությունը, ընթացակարգերը» փաստաթուղթը, որը չի արտացոլում բժշկական քոլեջի կրթական ծրագրերի առանձնահատկությունները, կրում է ընդհանրական բնույթ: Չնայած ԻՎ-ում նշված է, որ «Քոլեջը կատարել է առաջավոր փորձի համեմատական վերլուծություն», սակայն փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ տեղի են ունեցել որոշակի այցեր ՀՀ մի քանի նմանատիպ հաստատություններ, սակայն ՄԿԾ համեմատական վերլուծություն չի իրականացվել:

ՊԿՉ-ներում ներկայացված են վերջնարդյունքները ըստ շնորհվող որակավորումների: Քոլեջի ՄԿԾ-ներում քարտեզագրված չեն ծրագրերի բովանդակության հաջորդականությունը և առարկաների փոխկապակցվածությունը:

Քոլեջի կողմից ներկայացված առարկայական ծրագրերում թեև առկա են որոշակի վերջնարդյունքներ, սակայն դրանք ամբողջապես չեն համապատասխանում ՊԿՉ վերջնարդյունքներին և մոդուլային հավելվածներին:

3.2 ՄՈՒՀ-ն ունի մանսագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն, ինչը նպաստում է ուսանողակենտրոն ուսուցմանը:

Քոլեջի մասնագիտության կրթական ծրագրերի ուսումնառության վերջնարդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդները հիմնականում ներկայացված են «Դասավանդման և ուսումնառության մոտեցումների ու մեթոդների պարբերաբար արդիականացման քաղաքականությունը և ընթացակարգերը» փաստաթղթում: Ընդհանրական ձևով դրանք նկարագրված են ՄԿԾ-ներում, սակայն ներկայացված դասընթացների նկարագրերում դասավանդման և ուսումնառության մեթոդները բացակայում են: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ դասախոսները կիրառում են մի շարք արդյունավետ մեթոդներ, որոնք բավարարում են ուսանողներին ու շրջանավարտներին և արդյունավետ են նրանց տեսանկյունից:

Հաշվի առնելով քոլեջում իրականացվող բժշկական մասնագիտությունների առանձնահատկությունը և դասավանդող հմուտ մասնագետ բժիշկների փորձը՝ փորձագիտական խումբը արձանագրում է, որ ընդհանուր առմամբ կիրառվող մեթոդները կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան են: Զինվորական հոսպիտալ այցի ընթացքում պարզվեց, որ պրակտիկայի ընթացքում քոլեջի ուսանողները իրենց ունեցած տեսական գիտելիքների հիման վրա ցուցաբերում են բարձր ունակություններ և կարողություններ, իսկ հոսպիտալի ղեկավարությունը գոհ է քոլեջի թե՛ ուսանողներից, թե՛ շրջանավարտներից:

3.3 ՄՈՒՀ-ն ունի ուսանողների գնահատման քաղաքականություն՝ ըստ ուսումնառության արդյունքների, և ապահովում է ակադեմիական ազնվությունը:

Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջում 2018թ. մշակվել են «Ուսանողների գնահատման կարգ», «Ուսանողների գնահատման քաղաքականություն ու ընթացակարգ» փաստաթղթերը, որոնցում սահմանված է, որ քոլեջում գնահատումը իրականացվում է ըստ ՄԿԾ-ի ուսումնառության վերջնարդյունքների և շարադրված են գնահատման չափանիշերը և գնահատականի բաղադրիչները: Հանդիպումների ընթացքում պարզ դարձավ, որ նշված քաղաքականությունը դեռևս չի գործում և շահակիցները տեղյակ չեն նշված ընթացակարգերից:

Քոլեջում ամփոփիչ ատեստավորումը նույնպես անցկացվում է սահմանված կարգով: Որակավորման շնորհումը իրականացվում է հատուկ հանձնաժողովի կողմից, որում ներգրավված են պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ և մասնագիտական ոլորտի արտաքին մասնագետներ: Փորձագիտական խմբին ներկայացված քննական տոմսերի օրինակները հիմնականում ներառում են տեսական հարցադրումներ: Կարողության կամ հմտության գնահատման համար տոմսերում ներառված է լավագույն

դեպքում մեկ հարց: Այնինչ բժշկական ուղղվածության միջին մասնագիտական կրթության ծրագրերի վերջնարդյունքներում գերակշռում են մասնագիտական կարողություններն ու հմտությունները: Այդ բացը քոլեջը լրացնում է ուսանողների պոտենցիալ աշխատավայրերում պրակտիկայի կազմակերպման միջոցով:

Քոլեջում կարևորվում էր ուսանողների գնահատման համակարգի վերանայումը և հետագա կարատելագործումը: Այդ նպատակների իրականացվան համար մշակվել և հաստատվել էին «Ուսանողների գնահատման քաղաքականության վերանայման և արդյունավետությունն ապահովող մեխանիզմները», «Գնահատման մոտեցումների առաջավոր փորձի համեմատական վերլուծություն» ընթացակարգերը, որոնք աստիճանաբար գործադրվում են քոլեջի կողմից: Փորձագիտական խմբի այցի ընթացքում պարզվեց, որ համակարգի վերանայման համար ըստ նշված ընթացակարգերի կատարվել են հարցումներ, որոնք վերլուծված չեն:

Հաստատվել է «Ակադեմիական ազնվության քաղաքականությունը և ընթացակարգերը», որտեղ, սակայն, նշված չեն գրագողության բացահայտման մեխանիզմները՝ հստակ գործիքակազմ, համակարգչային ծրագրեր կամ այլ մեթոդներ: Հանդիպումների ընթացքում պարզվեց, որ դասավանդողների մի մասը առաջնորդվում է ակադեմիական ազնվության պահպանման քաղաքականության դրույթներով:

3.4 ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը բովանդակային առումով համահունչ են նմանատիպ այլ ճանաչված մասնագիտությունների կրթական ծրագրերին և նպաստում են ուսանողների ու դասախոսների շարժունությանը:

Քոլեջը փորձում է ապահովել իրականացվող ծրագրերի համահունչություն նմանատիպ այլ ՄԿԾ-ների հետ: Այդ նպատակներից ելնելով կատարվել են մի քանի այցեր ՀՀ նմանատիպ կրթական ծրագրեր իրականացնող միջին մասնագիտական հաստատություններ, ուսումնասիրվել են ՄԿԾ-ների իրականացման և շարժունության հիմքերը: Սակայն փորձագիտական խմբի այցի ընթացքում պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ը դեռևս չունի ծրագրերի համադրման հիման վրա ՊԴ կազմի և ուսանողների փոխանակումն ու շարժունությունն ապահովող գործող համաձայնագրեր /նշենք նաև, որ լիազոր մարմնի կողմից դրա համար մեխանիզմներ մշակված չեն/:

Հաշվի առնելով բժշկական մասնագիտություններ առանձնահատկությունները և արդեն իսկ առկա հաստատված ՊԿՁ-ները, փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջն ունի հիմքեր նմանատիպ այլ ճանաչված մասնագիտությունների կրթական ծրագրերին համապատասխան շարժունություն ապահովելու համար:

3.5 ՄՈՒՀ-ը որդեգրել է մասնագիտությունների կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման քաղաքականություն:

ՄԿԾ-երի վերանայման գործընթացը կազմակերպելու և համակարգելու համար 2018թ. հաստատվել է «Մասնագիտական կրթական ծրագրերի պարբերաբար գնահատման քաղաքականությունը, մշտադիտարկման և վերանայման ընթացակարգերը և մեխանիզմները» փաստաթուղթը, որտեղ նախատեսված չեն մոնիթորինգի հստակ մեխանիզմներ և ժամանակահատված գործընթացը ավարտելու համար:

ՄԿԾ-ների մշտադիտարկման և արդյունավետության գնահատման գործընթացներին հիմնականում մասնակցում են ներքին շահակիցները, իսկ արտաքին շահակիցների մասնակցությունը դեռևս ակտիվ չէ: Արտաքին շահակիցների մասնակցությունը ՄԿԾ-ների արդյունավետության գնահատման գործում սահմանափակվում է ամփոփիչ ատեստավորմանը նրանց մասնակցությամբ: ՄՈՒՀ-ում ՄԿԾ-ների մշտադիտարկման կարևոր մեխանիզմներից են հարցումները (մասնավորապես շրջանավարտների շրջանում), որոնք հնարավորություն են ստեղծում վերհանել խնդիրները և ներկայացնել ամբիոններ:

Ներքին շահակիցների կարիքները վերհանելու նպատակով ուսանողների և ՊԴ կազմի շրջանում ՈՆԱ կողմից կատարվել են հարցումներ: Արդյունքների հիման վրա վերանայումներ դեռևս չկան: Կրթական ծրագրերի վերաբերյալ ընթացիկ արդյունքները պարբերաբար քննարկվում են տնօրինական խորհրդում և ամբիոնների նիստերում:

ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝

Քոլեջի կրթական ծրագրերը ընդհանուր առմամբ համահունչ են առաքելությանը, սակայն առկա են կրթական ծրագրեր, որոնք դեռևս բարեփոխումների չեն ենթարկվել (գրադարանային գործ մասնագիտությունը դեռևս չի վերանայվել): ՄԿԾ-ների մշակման հիմքում աշխատաշուկայի վերլուծություններ չկան, սակայն ՄԿԾ-ների և առարկայական ծրագրերի անմիջական համաձայնեցումը ՄԿՈՒԶԱԿ-ի հետ նպաստել է վերջնարդյունքների սահմանմանը և ծրագրի կառուցվածքի կազմմանը:

Դրական է դասավանդման ավանդական մեթոդների հետ մեկտեղ ուսանողակենտրոն ուսուցմանն ուղղված մեթոդների ու ՏՏ կիրառումը (որոշ դասախոսներ կազմակերպում էին ՏՏ միջոցների կիրառում): Ուսանողները հիմնականում գոհ էին դասավանդման և ուսումնառության մեթոդներից: Փորձագիտական խումբը գտնում է, որ պրակտիկայի անցկացման և գնահատման գործընթացները կանոնակարգման և հստակեցման կարիք ունեն: Թեև կազմակերպական կառուցվածքի սխեմայում նշված է պրակտիկայի բաժնի առկայությունը, սակայն վերջինս փաստացի բացակայում է: Մինչդեռ քոլեջի համար պրակտիկայի առանձին պատասխանատուի առկայությունը կարևոր է, քանի որ դա ավելի կկանոնակարգի պրակտիկայի գործընթացը: Ելնելով բժշկագիտական մասնագիտությունների առանձնահատկությունից, փորձագիտական խումբը գտնում է, որ հատուկ մասնագիտական դասընթացների կազմակերպման հետ կապված ևս կարիք կա բարելավումների: Մասնավորապես, կարելի է ուսումնասիրել համանման բժշկական հաստատությունների փորձը և դասընթացները մոդուլային ձևաչափով իրականացնել զինվորական հոսպիտալում, Վարդենիս քաղաքի պոլիկլինիկայում և այլ մասնագիտացված հաստատություններում: Առավել ևս, որ ոլորտի պրակտիկ մասնագետների պատրաստման հարցում գործնական պարապմունքների և պրակտիկայի կազմակերպման արդյունավետության բարձրացման կարիքի մասին են նշում շահակիցները և գործատուները: Քոլեջում գնահատման համակարգը կարիք ունի որոշակի հստակեցման և հիմնավորման, ինչը կնպաստի ուսանողների կողմից ակնկալվող կրթական վերջնարդյունքների առավելագույնս յուրացմանը: Գնահատման մեթոդների և վերջնարդյունքների համապատասխանության հիմնավորման բացակայությունը մասամբ նաև հետևանք է վերջնարդյունքների ոչ չափելի ձևակերպման: Հաշվի առնելով նաև պրակտիկայի գնահատման հստակեցման կարիքը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ գնահատման գործող համակարգը չի երաշխավորում կարողությունների և հմտությունների պատշաճ գնահատումը:

ՄԿԾ-ների մշտադիտարկման համար կանոնակարգված մեխանիզմների և գործիքների առկայությունը կարող է նպաստել ներքին խնդիրների բացահայտմանն ու ՄԿԾ-ների բարելավմանը:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ՝ Հաշվի առնելով ակնկալվող ուսումնառության արդյունքներով ձևակերպված ՄԿԾ-ների համապատասխանությունը ՈԱՇ-ին, քոլեջի առաքելությանն ու տարածաշրջանում բժշկական մասնագիտությունների պահանջված լինելը, ուսանողակենտրոն ուսուցմանն ուղղված դասավանդման և ուսումնառության մեթոդների կիրառումը, սովորողների գնահատման և որակավորումների շնորհման համակարգի առկայությունը՝ կարելի է եզրակացնել, որ քոլեջի ՄԿԾ-ներն ընդհանուր առմամբ բավարարում են չափանիշ 3-ի պահանջներին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝ Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 3-ի պահանջներին գնահատվում է բավարար:

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

ՓԱՍՏԵՐ

4.1 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման հստակ մեխանիզմներ:

Քոլեջի կողմից մշակվել է «Ուսանողների հավաքագրման (մասնագիտական կողմնորոշման) քաղաքականությունը և ընթացակարգը», որի հիման վրա քոլեջում իրականացվում են դիմորդների հավաքագրման աշխատանքներ: Փորձագիտական խմբի այցի ընթացքում պարզվեց, սակայն, որ կարգով նախատեսված Մասնագիտական կողմնորոշման խորհուրդը հստակ ձևավորված չէ և չի իրականացնում համապատասխան գործառույթներ:

Դիմորդների հավաքագրման համար քոլեջը կիրառում է տեղեկատվության տարածման մի շարք մեխանիզմներ. տպագիր մամուլ, հեռուստատեսություն («Գեղամա» հեռուստաընկերության միջոցով), ֆեյսբուքյան էջ, ինչպես նաև իրականացվում է իրազեկման և մասնագիտական կողմնորոշման այցեր դպրոցներ: Այցերին մասնակցում են նաև ՊԴ կազմի ներկայացուցիչներ: Դիմորդների հավաքագրման մեխանիզմների արդյունավետության վերլուծություն չի իրականացվել:

Դիմորդների ընտրության և ընդունելության գործընթացն իրականացվում է հստակ մեխանիզմներով, որը սահմանված է լիազոր մարմնի (ԿԳՍՄ նախարարություն) կողմից:

4.2 ՄՈՒՀ-ը որդեգրել է ուսանողների կրթական կարիքների ուսումնասիրության քաղաքականություն և ընթացակարգեր:

Քոլեջն իր ուսանողների կարիքների վերհանումն իրականացնում է ՊԴ և դեկավար անձնակազմի կողմից անցկացվող պարբերական հանդիպումների, հարցումների և տարբեր խորհուրդներում ընդգրկված ուսանողների միջոցով: Փորձագիտական խմբի հետ հանդիպած ուսանողները նշեցին, որ հարցաթերթիկներում և հանդիպումների ժամանակ իրենց կողմից բարձրաձայնված որոշ խնդիրներ լուծվել են: Ուսանողների կարիքների վերհանմանը նպաստում է նաև ուսանողական խորհուրդը, որը իրականացնում է հարցումներ և տարատեսակ միջոցառումներ, ինչպես նաև ներգրավված է ուսանողների հետ տարվող աշխատանքներում և կարիքների վեր հանման գործընթացներում: Քոլեջի կանոնադրության ուսումնասիրությունը ցույց տվեց, որ վերջինս չի պարունակում կառավարման համապատասխան դրութեր կառավարման մարմիններում ուսանողների ներգրավման մասով: Փորձագիտական խմբի կարծիքով կանոնադրությունը կարիք ունի վերանայման լիազոր մարմնի կողմից սահմանված օրինակելի ձևին համապատասխան:

Փորձագիտական այցերի ժամանակ պարզ դարձավ, որ բարձր չէ ուսանողների շահագրգռվածությունը՝ վերհանելու իրենց կարիքներն ու մասնակցելու քոլեջում կատարվող գործընթացներին: Մշակվել է «Ուսանողների կարիքների վերհանման քաղաքականությունը և ընթացակարգերը» փաստաթուղթը, որի հիման վրա ՈՆԱ կառույցը իրականացրել է հարցումներ ուսանողների կարիքները գնահատելու համար: Սակայն փաստաթուղթը կարիք ունի լրամշակման, քանի որ չի ընդգրկում ուսանողների կարիքների վերհանման ողջ շրջանակը:

4.3 ՄՈՒՀ-ը ստեղծում է լրացուցիչ պարապմունքներ կազմակերպելու և խորհրդատվություն տրամադրելու հնարավորություններ՝ ուսանողների արդյունավետ ուսումնառությանը նպաստելու համար:

Քոլեջում ուսանողները կարող են խորհրդատվություն ստանալ դասախոսներից, դասղեկներից (սահմանված է դասղեկների խորհրդատվության գրաֆիկ), ամբիոններից, սակայն հիմնականում խորհդատվությունը ուսանողները ստանում են դասախոսներից, դասախոսների և ուսանողների միջև կապը ավելի ինտենսիվ է, սակայն խորհրդատվության տրամադրման ինստիտուցիոնալ մեխանիզմները բացակայում են: Ռեսուրսների դիտարկման այցերի արդյունքում պարզվեց, որ ամբիոնները, բացի նախաքննական խորհրդատվություններից, չունեն այլ խորհրդատվական գործունեության իրականացման ֆիքսված ժամանակացույց: Հանդիպման մասնակից ուսանողները փաստեցին, որ դասղեկները հասանելի են խորհրդատվություն տրամադրելու համար:

Քոլեջի կողմից սահմանվել է «Լրացուցիչ խորհրդատվական պարապմունքների նկարագրությունը, նպատակը և ժամանակացույցը» փաստաթուղթը: Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ փաստաթղթով նկարագրված գործընթացները դեռևս չեն գործում՝ բացառությամբ դասղեկական խորհրդատվությունների:

4.4 ՄՈՒՀ-ում սահմանված է վարչական աշխատակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց՝ ուսանողներին օժանդակություն և ուղղորդում տրամադրելու նպատակով:

Ուսանողներին տրամադրվում է օժանդակություն և ուղղորդում տարբեր ստորաբաժանումների կողմից (ամբիոններ, կարիերայի պատասխանատու, ՈՆԱ): Չնայած նրան, որ քոլեջում չկան ուսանողներին օժանդակություն և ուղղորդում տրամադրելու նպատակով վարչական աշխատակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց, գործում է բաց դռների սկզբունքը և ուսանողները կարող են ցանկացած հարցով դիմել քոլեջի բոլոր ստորաբաժանումներին և ստանան իրենց հարցերի պատասխանը: Քոլեջը փորձել է կանոնակարգել հավելյալ օժանդակություն տրամադրելու գործընթացը: Այդ առումով ստեղծվել է «Ուսանողներին՝ վարչակազմի կողմից հավելյալ օժանդակման և ուղղորդման կարգը» փաստաթուղթը: Այցի ընթացքում պարզվեց, որ փաստաթղթին քոլեջում ծանոթ չեն և ըստ այդմ էլ գործընթաց չի իրականացվում:

Քոլեջն արժևորում է օժանդակություն և ուղղորդում տրամադրելու մեխանիզմների արդյունավետության գնահատումը, ինչի նպատակով հարցումներ է իրականացվում: Փորձագիտական խմբի հետ հանդիպած ուսանողները բավարարված էին վարչական աշխատակազմի օժանդակությունից՝ շեշտադրելով քոլեջում ստեղծված անմիջական մթնոլորտը:

4.5 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ: Ուսանողների կարիերային նպաստելու նպատակով Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջը շարունակաբար համալրում է իր անձնակազմը մասնագիտական ոլորտում աշխատող պրոֆեսորադասախոսական կազմով, մասնագետ բժիշկներով՝ ապահովելով վերջիններիս անմիջական շփումն ու համագործակցությունն ուսանողների հետ: 2018 թվականից գործում է Կարիերայի կենտրոնը, որը կոչված է աջակցելու քոլեջի ուսանողներին/ շրջանավարտներին: Ուսանողական հարցումները և փորձագիտական այցը ցույց տվեցին, որ չնայած ձեռնարկվող քայլերին, կարիերայի ստորաբաժանման աշխատանքը դեռ սկզբնավորման փուլում է և ուսանողների մի մասն է տեղյակ կարիերային նպաստող ծառայություններից:

Փորձագիտական խմբի հետ հանդիպումների ժամանակ քոլեջի սովորողները նշեցին, որ ուսումնական հաստատությունն ու մասնագիտությունը ընտրել են հաշվի առնելով իրենց բնակության վայրերում բուժքույրական կադրերի պակասը:

4.6 ՄՈՒՀ-ն աջակցում է ուսանողներին՝ ներգրավվելու հաստատության գիտահետազոտական աշխատանքներում:

Քոլեջն իր ԻՎ-ում նշում է, որ «մեծ ուշադրություն է դարձվում ուսանողների ինքնուրույն, հատկապես հետազոտական աշխատանքներին: Անհատական և խմբային հետազոտական աշխատանքներ կատարվում են բոլոր կուրսերում՝ դասախոսների ղեկավարությամբ, սակայն հիմանականում աշխատանքները ներկայացնում են «Դեղագործության» և «Քույրական գործ» մասնագիտությունների ավարտական կուրսերի ուսանողները: Նրանք ներկայացնում են համապատասխան ռեֆերատներ»: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ առարկայի առանձնահատկությունից ելնելով՝ դասախոսները հանձնարարում են ուսանողներին կատարել ինքնուրույն աշխատանքներ: Սակայն այդ աշխատանքները դեռևս չեն հանդիսանում ուսանողի գնահատման բաղադրիչ և կատարվում են դասախոսի հայեցողությամբ:

4.7 ՄՈՒՀ-ում գործում է ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմին:

Քոլեջում գործում են ուսանողների իրավունքների պաշպանության տարբեր մեխանիզմներ: Ուսանողի և քոլեջի իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են նաև քոլեջի և ուսանողի միջև կնքվող պայմանագրով: Քոլեջում գործունեություն է ծավալում Ուսանողական խորհուրդը, որը պաշտպանում և ներկայացնում է ուսանողների շահերը քոլեջի կառավարման մարմիններում: Ուսանողական խորհրդից են ընտրվում այն ուսանողները, ովքեր ներգրավվում են այդ կառավարման մարմիններում: Ուսանողական խորհուրդը բարձրաձայնում է ուսանողների անհանգստությունները, խնդիրները և առաջարկությունները, անհրաժեշտության դեպքում առաջարկում լուծումներ: Ուսանողների հետ հանդիպումները փաստեցին, որ ուսանողական խորհուրդը ծավալում է ակտիվ գործունեություն ինչպես իրավունքների պաշտպանության, այնպես էլ կրթական գործընթացը ավելի որակյալ դարձնելու ուղղությամբ: Ստեղծվել է «Ուսանողների բողոքների դիտարկման» կարգը, որը սակայն չի գործում, իսկ ուսանողների հետ հանդիպումից պարզ դարձավ, որ ծանոթ չեն նշված կարգին:

Ուսանողների իրավունքները քոլեջում սահմանված չեն քոլեջի կանոնադրությամբ, սակայն բողոքների դեպքում ուսանողները հնարավորություն ունեն դիմելու և դիմում են քոլեջի տնօրինությանը:

4.8 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կրթական, խորհրդատվական և մատուցվող այլ ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմներ:

Քոլեջում ուսանողների կրթական, խորհրդատվական և մատուցվող այլ ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմներից առավել հաճախակի օգտագործվում են հարցումները, որոնք իրականացվում են ինչպես որակի ներքին ապահովման, այնպես էլ կարիերայի պատասխանատուի կողմից, տարբեր կուրսերի ուսանողների հետ: Ստացված տվյալների հիման դեռևս բերափոխումներ չեն կատարվել:

Քոլեջում բացի իրականացվող հարցումներից առկա չեն կրթական, խորհրդատվական և մատուցվող այլ ծառայությունների գնահատման և վերահսկման մեխնիզմներ:

ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ Քոլեջում գործող ուսանողների հավաքագրման ընթացակարգերը հստակ են և հաշվի են առնում քոլեջի առանձնահատկությունները: Դրան նպաստում է նաև տարիների ընթացքում ձեռք բերված քոլեջի բարձր հեղինակությունը տարածաշրջանում, ինչի մասին փաստում էին թե՛ գործատուները, թե՛ ուսանողները, թե՛ Վարդենիսի քաղաքապետը: Ապագա դիմորդների հետ կազմակերպվող միջոցառումները նպաստում են հավաքագրման աշխատանքների արդյունավետությանը:

Քոլեջի առանձնահատկություններից ելնելով՝ յուրաքանչյուր ուսանող ստանում է համապատասխան աջակցություն և անհատական մոտեցում վարչակազմի և դասախոսների կողմից, ինչպես նաև ուսանողներն հնարավորություններ ունեն մասնակցելու լրացուցիչ պարապմունքների, ինչն էլ նպաստում է ուսանողների մոտիվացիայի բարձրացմանը և կրթական միջավայրի լավացմանը:

Դրական գնահատելով վարչակազմին դիմելու համար ստեղծված անմիջական մթնոլորտը, այնուամենայնիվ, փորձագիտական խումբը անհրաժեշտ է համարում գործընթացի կանոնակարգումը և հաստատված ժամանակացույցերի առկայությունը, ինչը կմեծացնի վարչական անձնակազմի պատասխանատվությունը և կնպաստի սովորողների տարատեսակ հարցերով ընդունելու գործընթացի հստակեցմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում Կարիերայի կենտրոնի գոյությունը: Քոլեջը շատ աշխատանք ունի կատարելու կենտրոնի վերաբերյալ տեղեկատվության տարածման առումով, քանի որ ուսանողների մեծ մասը տեղյակ չէ կենտրոնի գործունեության մասին և գրեթե չի օգտվում նրա ծառայություններից: Կենտրոնի գործունեության մասին տեղեկատվության բարձրացումը և առավել ակտիվությունը կնպաստի ուսանողների և գործատուների համագործակցությանը և կարող է ազդեցություն ունենալ շրջանավարտների զբաղվածության հարցի լուծման տեսակետից:

Գնահատելով ՈՒԽ առկայությունը քոլեջում և գտնելով, որ այն աշխատանք է իրականացնում քոլեջում, այնուամենայնիվ փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում ուսանողների մեծամասնության անտարբերությունը վերոհիշյալ մարմինների աշխատանքների նկատմամբ, ինչը չի նպաստում ուսանողների կարիքների վերհանմանն ու շահերի պաշտպանությանը:

Ուսանողներին մատուցվող տարատեսակ ծառայությունների գնահատման համար ներկայումս կիրառվող հարցումները այդքան էլ արդյունավետ չեն, ինչը ռիսկային է դարձնում այդ մեխանիզմի գործունակությունը:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ՝ Հաշվի առնելով, որ քոլեջն ունի ուսանողների հավաքագրման և ընդունելության հստակ ընթացակարգ, ուսանողների կրթական կարիքների վերհանմանը միտված որոշ մեխանիզմներ, ուսանողները հնարավորություն ունեն մասնակցելու լրացուցիչ պարապմունքների և ստանալու խորհրդատվություններ, քոլեջում գործում են մարմիններ, որոնք իրենց գործունեությամբ օժանդակում են ուսանողներին և նպաստում նրանց կրթական կարիքների լուծմանը, փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջն ընդհանուր առմամբ ապահովում է ուսանողների համար արդյունավետ կրթական միջավայր:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝ Փորձագիտական խումբը Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 4-ի պահանջներին գնահատում է բավարար:

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

ՓԱՍՏԵՐ

5.1 ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության քաղաքականություն և ընթացակարգեր:

Քոլեջում մարդկային ռեսուրսների ներգրավման և կառավարման գործընթացների հիմքում ընկած են ՀՀ աշխատանքային օրենսգիրքը, Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջի

կանոնադրությունը, «Դասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականությունը և ընթացակարգը», «Հիմնական դասախոսական կազմի կայունությունն ապահովող քաղաքականությունը և ընթացակարգը», քոլեջի ՌԾ-ն (նպատակ 5, որակյալ կադրային ներուժ): Բացի հիմնական դասախոսական կազմից քոլեջում դասավանդման համար հրավիրվում են Վարդենիսի պոլիկլինիկայի, զինվորական հոսպիտալի, մասնագիտացված դեղատների և կոսմետոլոգիայի սրահների բանիմաց մասնագետներ:

Դասավանդող կազմի մրցութային կարգով ընտրություն չի իրականացվում: Թափուր աշխատատեղերի վերաբերյալ հայտարարություններ չեն տրվում, թեկնածուներին գտնում են անձնական կապերի միջոցով:

Քոլեջը սահմանել է «Դասավանդողների խրախուսման քաղաքականությունը և ընթացակարգերը» փաստաթուղթը, սակայն փորձագիտական հանդիպումների ընթացքում պարզվեց, որ դեռևս փաստաթուղթը չի կիրառվում և խրախուսվածներ չկան ՊԴ կազմում:

ՊԴ և ՈՒՕ կազմի ընտրության կիրառվող մոտեցումների արդյունավետությունը գնահատված չէ: Փորձագիտական այցի հանդիպումներին մասնակից ուսանողները գոհ էին առկա դասախոսական կազմից:

5.2 ՄՈՒՀ-ի յուրաքանչյուր կրթական ծրագրի համար սահմանված են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ:

Չնայած քոլեջում գործող «մասնագիտական որակներին ներկայացվող պահանջների վերանայման քաղաքականություն»-ը որոշակիորեն աղերսներ ունի ՊԴ կազմի մասնագիտական որակներին ներկայացվող ընդհանրական պահանջներն, ներկայացված կրթական ծրագրերում դեռևս սահմանված չեն պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջներ:

5.3. ՄՈՒՀ-ը սահմանել է հստակ քաղաքականություն և ընթացակարգեր դասախոսական կազմի պարբերաբար գնահատման համար:

Քոլեջն իր ՌԾ-ով նախատեսում է ներդնել դասախոսների գիտամանկավարժական գործունեության արդյունավետության գնահատման գործուն ընթացակարգ. «Մշակել և ներդնել դասախոսների մանկավարժական գործունեության գնահատման ցուցանիշների գործուն համակարգ:» (ՌԾ նպատակ 5, որակյալ կադրային ներուժ, խնդիր 5.1):

Փաստացի գնահատումն իրականացվում է անհատական (ամբիոնի վարիչի գնահատում՝ դասախոսի անհատական աշխատանքային պլանի կատարման արդյունքների և դասալսումների հիման վրա) և կոլեկտիվ (քոլեջի ղեկավար կազմի կողմից իրականացվող հսկողական դասալսումներ և դասախոսի գործունեության անհատական մատյանի ուսումնասիրում) գնահատման եղանակներով: Ամբիոնների վարիչների հաշվետվություններում, սակայն, չկա ՊԴ կազմի գնահատման արդյունքների վերլուծություն: Իսկ այցի ընթացքում ուսումնասիրված դասալսումների մատյաններում որևէ խնդիր դուրս չի բերված, չկան առաջարկություններ հետագա բարելավման համար:

5.4. Պարբերաբար իրականացվող ներքին և արտաքին գնահատումների արդյունքում, բացահայտված կարիքներին համապատասխան, ՄՈՒՀ-ն իրականացնում է դասավանդողների կատարելագործմանն ուղղված միջոցառումներ

Քոլեջն իր ՌԾ-ի կարևորագույն քայլերից է համարում հետևյալը. «Քայլեր ձեռնարկել խոստումնալից կադրերի խրախուսման, աջակցման, պահպանման, նոր անհրաժեշտ կադրերի ներգրավման ուղղությամբ:» (ՌԾ նպատակ 5, որակյալ կադրային ներուժ, խնդիր 5.1): Այս առումով քոլեջը դասավանդման գործընթացում ներգրավել է տեղի գործող հասատությունների հմուտ և տարաշածրջանում ճանաչված մասնագետների, որոնք դասավանդում են հատուկ մասնագիտական առարկաներ, իսկ մնացած առարկայախումբը դասավանդում են քոլեջի հաստիքային դասախոսները:

ԻՎ-ում քոլեջը նշում է, որ «Պարբերաբար իրականացվող ներքին և արտաքին գնահատումների արդյունքում բացահայտված կարիքներին համապատասխան, քոլեջում իրականացվում են ՊԴ-ի կատարելագործման մասնագիտական մանկավարժամեթոդական միջոցառումներ, համաձայն դասավանդողների կատարելագործման միջոցառումների պլանի, ուր նշված են թեմաները, ժամանակացույցը, որոնք ինքնին ընդգծում են ՊԴ-ի կատարելագործման գործընթացները»: Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ նշված գործընթացը կարիքների վերհանման մակարդակով դեռևս տեղի չի ունենում: Որոշ դասախոսներ անցնում են վերապատրաստումներ այն պատճառով, որ դասավանդում են նաև դպրոցում և դպրոցական ծրագրերի շրջանակներում իրականացվող վերապատրաստումներին մասնակցում են:

Դասախոսների կատարելագործման կիրառվող մեխանիզմների արդյունավետությունը գնահատված չէ:

5.5 ՄՈՒՀ-ը երաշխավորում է մասնագիտությունների կրթական ծրագրերի՝ համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմով ապահովվածության կայունությունը:

Քոլեջում կրթական ծրագրերի կաղրային կայունությունը ապահովելու համար մշակվել է «Հիմնական դասախոսական կազմի կայունությունն ապահովող քաղաքականությունն ու ընթացակարգերը» փաստաթուղթը, որի որոշ դրույթներ են դեռևս կիրառելի քոլեջում, իսկ փաստաթղթին ծանոթ չեն քոլեջի դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ներկայացուցիչները: Դրա հետ մեկտեղ քոլեջը հնարավորություն է տալիս իր հիմնական դասախոսներին դասավանդել նաև դպրոցներում, դրանով ապահովելով նաև դասախոսական կազմի սոցիալական կայունությունը:

Ելնելով մասնագիտության համար անհրաժեշտ առարկայացանկից՝ քոլեջում դասավանդում են նաև տարածաշրջանի տարբեր հաստատությունների հմուտ մասնագետներ՝ իրենց հարուստ փորձը փոխանցելով ուսանողներին, ինչպես նաև նրանց ներգրավվում են իրենց հաստատություններում որպես պրակտիկանտներ՝ տեղում գործնական հմուտություններ և կարողություններ փոխանցելով ուսանողներին:

5.6 ՄՈՒՀ-ում գործում են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:

ՊԴ կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման տեսակետից քոլեջում դեռևս չի կիրառվում հստակ քաղաքականություն, չնայած որ մշակվել է «Պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականությունը և ընթացակարգերը» փաստաթուղթը:

Քոլեջը մշակել է սկսնակ դասավանդողների մենթորության հաստատված քաղաքականություն և ընթացակարգեր, որի շնորհիվ փորձ է արվում երիտասարդ մասնագետներին հաղորդել փորձառու դասախոսների ունեցած փորձը: ԻՎ-ում նշվում է, որ «Սկսնակ դասախոսների հետ տարվում է մասնագիտական առաջընթացը ապահովող լուրջ աշխատանք: Մենթորը /ամբիոնի վարիչ կամ փորձառու դասախոս/ և մեթոդիստը, նրանց ծանոթացնում են քոլեջի ներքին կարգ ու կանոնին, ամբիոնի աշխատանքին, ուսումնական ծրագրերին, թեմատիկ պլանին, դաս տեսակներին, դասավանդման ընդունված մեթոդներին, առկա ռեսուրսներին և մատենավարությանը»: Փորձագիտական խմբի այցի ընթացքում պարզվեց, որ ամբիոններում և քոլեջի մեթոդիստի կողմից հիմնականում կատարվում են ուղղորդիչ աշխատանքներ սկսնակ մասնագետների համար:

5.7 ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմ՝ ռազմավարական նպատակների իրականացման համար:

Ուսումնական գործընթացը կազմակերպում և անմիջականորեն համակարգում են ուսումնական և ուս. դաստիարակչական աշխատանքների գծով փոխտնօրենը, մեթոդիստը, ամբիոնները: Կադրերի բաժինը, ՈՆԱ պատասխանատուն, Կարիերայի պատասխանատուն և այլն, օժանդակում և նպաստում են դասավանդման և ուսումնառության գործընթացի իրականացմանը: Բոլոր օղակները գործում են՝ հիմք ընդունելով կանոնակարգող փաստաթղթերը, դասավանդման և ուսումնառության գործընթացի վարչարարությունն իրականացնելիս կարևորում են էթիկայի նորմերը:

ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջը կարողացել է հավաքագրել իր կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ՊԴ և ՈՒՕ կազմ՝ բացի հիմնական դասախոսներից ներգրավելով նաև պայմանագրային հիմունքներով քաղաքացիական անձանց, որոնց մի մասը նաև գործատուներ են: Սակայն մրցութային կարգի և թափուր աշխատատեղերի վերաբերյալ հայտարարությունների տարածման բացակայությունը խոչընդոտում է նոր կադրերի ներգրավման թափանցիկությանը, սահմանափակում է թեկնածուների շրջանակը և կարող է խանգարել որակյալ կադրերի ներհոսքին: Փորձագիտական խումբը բարձր է գնահատում փորձառու բժիշկ մասնագետների ներգրավումը դասախոսական կազմում, ինչը հնարավորություն է տվել նրանց պրակտիկ գիտելիքներն ու փորձը փոխանցել ուսանողներին: ՊԴ կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջները ՄԿԾ-ներում ընդհանրական են, մասնավորեցված չեն ըստ ՄԿԾ առանձնահատկությունների: Այդ բացը հնարավորություն չի տալիս ուսումնական հաստատությանը, ՄԿԾ պահանջներից ելնելով, վերլուծել առկա ՊԴ կազմի որակների բավարարումը և հիմնավոր երաշխավորել ՄԿԾ վերջնարդյունքների ձեռքբերումը: ՊԴ կազմի անհատական և կոլեկտիվ գնահատման եղանակները ապահովում են որոշակի պատկեր, սակայն ոչ ըստ ՄԿԾ-ում պահանջվող որակների: Որպես այդպիսին, գնահատումների խորքային վերլուծություններ չկան, որոնք հնարավորություն կտային պարզել դասախոսական կազմի հիմնական ձեռքբերումները և թերացումների պատճառները: Կիրառվող հարցումները արժանահավատության գնահատում չեն անցել, ինչը կարող է ազդել գնահատականի օբյեկտիվության վրա:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում քոլեջի ջանքերը ՀՀ-ում ՊԴ կազմի վերապատրաստումների ու դասընթացների մասնակցություն ապահովելու ուղղությամբ: Սակայն հիմնված չլինելով ներքին և արտաքին գնահատումների վրա, վտանգվում է այդ վերապատրաստումների նպատակայնությունը և ծախսերի արդյունավետությունը:

Քոլեջը կարողացել է ապահովել իր ՄԿԾ-ների ՊԴ կազմով ապահովման կայությունը՝ չնայած պայմանագրային համատեղողներից էական կախվածությանը: Սակայն ՊԴ կազմի ծանրաբեռնվածությունը և նեղ մասնագետների սակավությունը կարող են վտանգել կրթական գործընթացի բնականոն ընթացքը՝ նրանց փոխարինման անհրաժեշտության առաջացման դեպքում:

Քոլեջում առկա վարչական և ՈՒՕ կազմը նպաստում են առաքելության և կրթական ծրագրերի նպատակների իրականացմանը, սակայն որոշ ուղղություններով զարգացման արդյունավետությունը բարձրացնելու համար փորձագիտական խումբը վարչական գործառույթների հստակեցումների անհրաժեշտություն է տեսնում :

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ՝ Հաշվի առնելով կրթական ծրագրերի նպատակներին համապատասխան ՊԴ և ՈՒՕ կազմով ապահովվածությունը, պրակտիկ ոլորտի հարուստ փորձ ունեցող մասնագետների անմիջական ներգրավումը կրթական գործընթացում, փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջն ապահովված է իր առաքելության և ՄԿԾ համապատասխան անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող ՊԴ և ՈՒՕ կազմով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝ Փորձագիտական խումբը Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 5-ի պահանջներին գնահատում է բավարար:

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԳԱՑՈՒՄ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

ՓԱՍՏԵՐ

6.1 ՄՈՒՀ-ում առկա է հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող ռազմավարություն:

Քոլեջն իր ԻՎ-ում նշում է, որ «Քոլեջն իրականացնում է հետազոտական գործունեություն համապատասխան ռազմավարական ծրագրերով և արդյունքների վավերացմամբ: Հետազոտական ոլորտում քոլեջին իր հետքրքրությունները, հավակնությունները կապում է ուսումնառության հետ, ուսումնառողներից չի ակնկալում գիտահետազոտական աշխատանքներ, սակայն պահանջվում է հետազոտական աշխատանքներ՝ ընդհանուր մասնագիտական, հատուկ մասնագիտական, մանկավարժամեթոդական, վիճակագրության ուղղություններով»: Սակայն փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ քոլեջում հետազոտական ոլորտի հետաքրքրություններ չկան, որոշ դասախոսներ որոշակի հետազոտություններ են իրականացնում սեփական նախաձեռնությամբ, որը քոլեջում չի ներդրվում ուսումնական գործընթացում:

Քոլեջը մշակել է «Հետազոտական արդյունքների վավերացման մեխանիզմները» փաստաթուղթը, որի ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ այն դեռևս ներդրված չէ քոլեջի հետազոտական գործունեության հիմքում: Մասնավորապես, փաստաթուղթը ենթադրում է, որ «Հետազոտական աշխատանքների արդյունքների վավերացումը այն գործընթացն է, որը հնարավորություն է ընձեռնում ներկայացնելու աշխատանքը և գնահատվել:

Վավերացման մեխանիզմներն են.

1. ՊԴ և ՈՒՕ կազմի համար ներամբիոնային քննարկումները, արդյունքների հաստատումը ուսումնամեթոդական կամ կառավարման խորհուրդներում»: Սակայն փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ քոլեջը չունի կառավարման խորհուրդ և նման հարցեր չի քննարկել թե համանման այլ խորհրդում, թե ուսումնամեթոդական խորհրդում:

Քոլեջը դեռևս չունի սահմանված հետազոտական ոլորտի առաջնահերթություններ:

6.2 ՄՈՒՀ-ն ունի երկարաժամկետ ռազմավարություն և միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրեր, որոնք արտահայտում են հետազոտության ոլորտում ՄՈՒՀ-ի հետաքրքրությունները և հավակնությունները:

Հետազոտական ոլորտում Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջի երկարաժամկետ ռազմավարությունը, նպատակները և խնդիրները փորձ է արվել արտացոլել «Հետազոտության ոլորտում ՄՈՒՀ-ի երկարաժամկետ ռազմավարությունը, միջնաժամկետ և կարճաժամկետ ծրագրերը» փաստաթղթում:

Կարճաժամկետ և միջնաժամկետ ծրագրերում նախատեսված չեն հետազոտական ոլորտում ՄՈՒՀի հետաքրքրություններն ու հավակնությունները: Քոլեջը երկարաժամկետ ռազմավարական ծրագրի մեջ նախատեսում է ուսումնամեթոդական ձեռնարկների, թեստային ժողովածուների և ուսումնառության նյութերի հավաքածուների կազմում և հետազոտական գործունեության ծավալում, ինչպես նաև կարճաժամկետ դասընթացների ծրագրերի կազմում, նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրում: Նշված ծրագրերը իրենցից ներկայացնում են ավելի շատ տարատեսակ խնդիրների թվարկում, քան

նպատակային քայլերի հերթականություն, չեն արտացոլում հետազոտական գործունեության հստակ ռազմավարություն, չկան առաջընթացի գնահատման ցուցիչներ:

6.3 ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտությունների իրականացումը և իր զարգացումը՝ հստակ քաղաքականության և ընթացակարգերի միջոցով:

Ըստ քոլեջի ԻՎ-ի տնօրինությունը կարևորում է դասախոսների և ուսումնառողների հետազոտական գործունեության ծավալումը, ձգտում է բարելավել հետազոտական գործընթացի իրականացման համար անհրաժեշտ տարածքային և նյութատեխնիկական պայմանները, զարգացնել և արդիականացնել քոլեջի ուսումնական և լաբորատոր բազան:

Որպես հետազոտական գործունեության իրականացման տարրեր ԻՎ-ում նշվում են հետևյալ մեխանիզմները՝

- կլոր սեղանի շուրջ զրույցներ
- համաժողովներ
- շնորհանդեսներ
- հրապարակումներ
- տպագրված ուսումնամեթոդական ձեռնարկներ
- ռեֆերատներ:

Բացի վերոնշյալից քոլեջում գործում է կուրսային աշխատանքների նախապատրաստման և պաշտպանության կանոնակարգ:

ՄՈՒՀ այցելության ընթացքում պարզ դարձավ, որ տվյալ պահին հետազոտական աշխատանքները սահմանափակվում են միայն ուսանողների կողմից գրվող ռեֆերատներով:

Դասախոսների և ուսանողների անհատական հետաքրքրություններով պայմանավորված՝ հետազոտությունները չեն փաստաթղթավորվում:

Փորձագիտական խումբը փաստում է, որ քոլեջում առկա է հետազոտական որոշակի գործունեություն (առանձին դասախոսների անհատական ջանքերի շնորհիվ), սակայն հետազոտությունների իրականացման և զարգացման հստակ քաղաքականություն դեռևս ձևակերպված չէ և առկա չեն համապատասխան ընթացակարգեր: Քոլեջը մշակել է «Հետազոտական աշխատանքների բարելավմանն ուղղված միջոցառումները», որոնք դեռևս ներդրված չեն ներքոլեջային հետազոտությունների ոլորտում:

Քոլեջը ձգտում է բարելավել հետազոտական գործընթացի իրականացման համար անհրաժեշտ տարածքային և նյութատեխնիկական պայմանները, զարգացնել և արդիականացնել քոլեջի ուսումնական և լաբորատոր բազան աշխատակիցներին և ուսանողությանը տրամադրելով հետազոտական աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ռեսուրսներ:

6.4 ՄՈՒՀ-ը կարևորում է հետազոտական գործունեության միջազգայնացումը:

Քոլեջում բացակայում է հետազոտական գործունեության կանոնակարգվածությունը, ուստի միջազգայնացման կարևորությունը չի դիտարկվում քոլեջի կողմից:

Դասախոսներն ու ուսանողները ներգրավված չեն ոչ մի միջազգային հետազոտական նախաձեռնություններում, քանի որ ներկայումս ՄՈՒՀ-ի ֆինանսական ռեսուրսները բավարար չեն միջազգային կազմակերպությունների հետ կապերի ստեղծման, համապատասխան պայմանագրերի կազմման, փոխադարձ այցելությունների և հետազոտական աշխատանքների իրականացման համար:

6.5 ՄՈՒՀ-ում գործում են հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներ:

ՄՈՒՀ-ն ուսումնական գործընթացի և հետազոտական գործունեության փոխկապակցման մեխանիզմ է հանդիսանում դասախոսների կողմից իրականացվող մեթոդական և կազմակերպչական աշխատանքները: Ուսանողների կողմից իրականացված և

դասախոսների կողմից ուղղորդված կուրսային աշխատանքներն ու ռեֆերատները դիտարկվում է ՄՈՒՀ-ի կողմից որպես հետազոտությունների իրականացումն ու զարգացումը ապահովող տարրեր:

Յուրաքանչյուր ավարտական կուրսի ուսանող պարտավորվում է կատարել կուրսային աշխատանք: Հավաքագրված նյութերը /բոլոր տարիների ընթացքում/ քոլեջը նպատակ ունի օգտագործել որպես նյութ՝ հետագայում հետազոտական աշխատանքերի իրականացման համար:

Քոլեջն ԻՎ-ում նշում է, որ «Հետազոտական գործունեությունը փոխկապակցված է ուսումնական գործընթացի հետ, որով այն արդյունավետ է դառնում և՝ դասավանդողների համար /մասնագիտական առաջընթացի ապահովում, ուսումնա-մեթոդական համալիրի հարստացում/, և՝ վարչական աշխատողների համար /ուսումնական գործընթացի բարելավում, վիճակագրական տվյալների արխիվացում/, և՝ ուսումնառողների համար/ խորացված գիտելիքների և կարողությունների ձեռքերում, ինքնուրույնության դրսևորում, վերլուծական, տրամաբանական, ստեղծագործական մտքի զարգացում, աշխարհայացքի ընդլայնում/»: Նշվածը չի պարունակում հետազոտության տարրեր և հետազոտական գործունեության հետ առնչություն չունի:

Քոլեջում չեն իրականացվում ուսանողների մոտ հետազոտական կարողությունների ձևավորմանը միտված լրացուցիչ դասընթացներ:

ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջը փորձել է մշակել հետազոտական ուղղություններ, սակայն այդ ուղղությունները չեն արտացոլում քոլեջի մասնագիտական ուղղությունները, իսկ հետազոտական հետաքրքրությունների իրականացման ընդգրկուն ռազմավարության բացակայությունը թուլացնում է հետազոտական գործունեության զարգացումը:

Քոլեջի աշխատակիցների կողմից հրատարակվող հոդվածների և թեզիսների քիչ քանակը (2 դասախոս) անհանգստացնող պետք է լինի քոլեջի համար, քանի որ այն ցույց է տալիս իրականացվող հետազոտական աշխատանքների ցածր ակտիվությունը:

Քոլեջը որևէ բան չի անում հետազոտական աշխատանքների միջազգայնացման առումով: Հաշվի առնելով բժշկագիտական մասնագիտությունների առանձնահատկությունները՝ պետք է փաստել, որ ոլորտի փորձերը և իրականացվող ուսումնասիրությունները հրապարակելու դեպքում քոլեջը կունենա ճանաչում և հետաքրքրություն կարող է առաջացնել արտաքին շահակիցների մոտ:

Չնայած առկա որոշ աշխատանքներին՝ ուսանողական հետազոտական աշխատանքները դեռևս չեն հանդիսանում ուսումնառության բաղկացուցիչ մասը, որը կարող է բացասաբար ազդել կրթական վերջնարդյունքների ձևավորման վրա: Քոլեջում հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման հստակ մեխանիզմների բացակայությունն ազդում է ՄԿԾ-ներում հետազոտական բաղադրիչի զարգացման վրա: Միջին մասնագիտական կրթության մոդուլային ուսուցման առանձնահատկություններից է հետազոտությունների հիման վրա ուսուցման կազմակերպումը, որը մոդուլային ուսուցման ձևաչափով քոլեջում չի իրականացվում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝ Հաշվի առնելով, որ ներկայումս քոլեջում առկա չէ հետազոտական ոլորտում իր հետաքրքրություններն ու հավակնություններն արտահայտող ռազմավարություն, քոլեջի կողմից տրամադրվող ռեսուրսները բավարար չեն հետազոտական գործունեություն իրականացնելու համար, թույլ է քոլեջի հետազոտական գործունեության միջազգայնացումը, ինչպես նաև հստակ չեն հետազոտության և ուսումնառության միջև եղած կապերը, փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը չի ապահովում հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ՝ Փորձագիտական խումբը Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 6-ի պահանջներին գնահատում է անբավարար:

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ՝

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

ՓԱՍՏԵՐ

7.1 ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր:

Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջն իր գործունեությունն իրականացնում է Վարդենիս քաղաքում տաղակայված մասնաշենքերում՝ 419.1մ² մակերեսներով: Քոլեջն ունի անհրաժեշտ քանակով լսարաններ, հատուկ կահավորված լաբորատորիաներ: Կա համակարգչային տեխնոլոգիաներով կահավորված մեկ լսարան: Գործում է մեկ գրադարան:

Նյութատեխնիկական հագեցվածության և կրթական միջավայրի բարելավումը քոլեջի ռազմավարական խնդիրներից է, ինչը ամրագրված է ՌԾ-ի նպատակ 3-ի խնդիր 3.2-ում խնդիր 3.3-ում: Քոլեջի կրթական ծրագրերի իրականացումը պահանջում է դրանց յուրահատկություններին համապատասխանող միջավայր, որն իր մեջ ներառում է ժամանակակից սարքավորումներով հագեցված լաբորատորիաներ, գրադարան և այլն: ՄԿԾ-երի հիմնական մասը կիրառական բնույթի են և պահանջում են հատուկ կաբինետային և լաբորատոր ապահովվածություն: ՄԿԾ-ների իրականացման համար հաստատված ՊԿՉ-ներում պահանջվող ռեսուրսները ընդհանուր առմամբ նկարագրված են:

ՄՈՒՀ-ը գործունեությունը իրականացնում է երկհարկանի, անհատույց օգտագործման իրավունքով ուսումնական տարածքում՝ համապատասխան լսարաններով, լաբորատորիաներով, համակարգչային կաբինետով, գրադարանով, վարչական և օժանդակ տարածքներով: Առկա է մարզահրապարակի հետ պայմանագիր: Լսարաններն ու լաբորատորիաները հագեցած են բավարար գույքով՝ ուսուցումն իրականացնելու համար: Այցելության ընթացքում դիտարկվեցին մուլյաժները, դիդակտիկ նյութերը, բժշկական սարքավորումները և այլ նյութերը, որոնք կիրառվում են կրթական ծրագրերի իրականացման ժամանակ: Գրադարանը մասամբ համալրված էր մասնագիտական և ոչ մասնագիտական գրականությամբ: Կանոնակարգված էր գրադարանի աշխատանքը: Չնայած դրան, գրադարանն ունի գրականության պակաս, հատկապես բժշկական մասնագիտությունների համար: Առկա չէ նաև էլեկտրոնային գրադարանը: Աշխատանքներ էին իրականացվում գրքերի վերաբերյալ տեղեկությունների, առկա գրականության ցանկի ուղղությամբ: Առկա գույքը, մասնավորապես գրասեղաններն ու աթոռները հնամաշ էին, և կարիք կար վերականգնման կամ նորերով փոխարինման: Քոլեջի տարածը ամբողջությամբ ջեռուցվում էր: Քոլեջի կայքը գտնվում է դեռևս ստեղծման փուլում: Լաբարատոր և այլ անհրաժեշտ սարքավորումների պակասը լրացվում է տեղի պոլիկլինիկայի և զինվորական հոսպիտալի հարուստ բազայի հիման վրա:

7.2 ՄՈՒՀ-ը, իր առաքելությունն ու նպատակներն իրականացնելու համար, հատկացնում է համապատասխան ֆինանսական ռեսուրսներ՝ անհրաժեշտ միջոցներով և սարքավորումներով ապահովելու ու գործարկելու համար:

Քոլեջի ֆինանսական ռեսուրսները ձևավորվում են ուսանողական վարձավճարներից, չկան պետբյուջեի հատկացումներ և այլ աղբյուրներ:

Ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականության տեսակետից քոլեջում առկա է տարեկան ֆինանսական պլանավորում և հաշվետվողականություն (հարկային մարմին, մարզպետարան, ԿԳՍՄ նախարարություն):

Վերջին տարիների ֆինանսական հոսքերի փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ քոլեջի եկամուտները կրճատվել են, ինչը հիմնականում պայմանավորված է եղել սովորողների թվի հետ: Փորձագիտական խմբի այցերի ընթացքում տեղի ունեցած հանդիպումները արտաքին շահակիցների հետ փաստեցին, որ քոլեջում դիմորդների հոսքը պակասել է հիմնականում պետական նմուշի դիպլոմի հարցի հետ կապված, ինչը շրջանավարտների աշխատանքի տեղավորման խոչընդոտ է հանդիսացել:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերջին տարիներին գնալով նվազում ենֆինանսական մուտքերը ֆինանսական միջոցները սարքավորումների ապահովման և գործարկման ուղղությամբ անբավարար են: Օրինակ՝ գրադարանը հիմնականում համալրվում է համապատասխան գրականությամբ բացառապես նվիրատվությունների միջոցով, առանց ՄՈՒՀ-ի կողմից ֆինանսական ներդրման: Համաձայն վերջին տարիներին կազմված նախահաշիվների ուսումնասիրման՝ ՄՈՒՀ-ի ֆինանսական միջոցները հիմնականում նախատեսվում են աշխատավարձերի վճարման, հարկերի, տուրքերի, կոմունալ վճարումների, գործնական պարապմունքների համար: 2018 թ. տարիֆիկացիան նախատեսված է 36 աշխատակցի համար: Այսպիսով ֆինանսական միջոցները խիստ սուղ են ինչի արդյունքում աշխատավաձերը ևս ցածր են: Դրամաշնորհային ծրագրերով ֆիանսավորումներ չկան, ինչպես նաև չկան այլ գործունեությունից եկամուտներ: Բյուջեն ձևավորվում է բացառապես ուսման վարձավճարներից:

Ֆինանսական ռեսուրսների օգտագործման մշտադիտարկման, արդյունավետության գնահատման և բարելավման մեխանիզմներ չեն կիրառվում:

7.3 ՄՈՒՀ-ում գործում է մասնագիտությունների կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականություն:

Ընդհանուր առմամբ մասնագիտական կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող ֆինասական ռեսուրսների բաշխման գործուն համակարգ առկա չէ: Սակայն կան դրական օրինակներ: Գործատուները, որոնք նաև հանդիսանում են քոլեջում դասախոսներ, իրենց ունեցած բազան և միջոցները օգտագործում են ուսանողներին գործնական գիտելիքներ տրամադրելու համար (դեղատների տնօրենները, կոսմետոլոգիայի սրահների սեփականատերերը): Թեև քոլեջը փորձել է ստեղծել «Հաստատության կրթական նպատակների իրականացման համար ֆինանսական միջոցները կառավարելու և դրանք նպատակներին համապատասխան բաշխելու մեխանիզմները» ընթացակարգը՝ առանջնահերթությունների և կարիքներից ելնելով, սակայն փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ հիշյալ փաստաթղթով քոլեջում չեն առաջնորդվում:

Բյուջեի նախագիծը կազմվում է նախորդ տարիների փաստացի կատարողականի հիման վրա՝ հաշվի առնելով քոլեջի զարգացմանն ուղղված քայլերը, նախօրոք հաշվված եկամուտները, կատարվելիք ընդհանուր ծախսերը: Բյուջեի նախագիծը չի քննարկվում քոլեջի տնօրինական խորհրդում կամ այլ խորհրդակցական մարմիններում: Քոլեջը չունի միջոցների բաշխման հստակ քաղաքականություն, որը նախատեսում է տարբեր ստորաբաժանումների կողմից հայտերի ներկայացում, դրանց քննարկում/մարկետինգ և անհրաժեշտ նյութերի ձեռքբերում:

Ֆինանսկան սղության պատճառով չկա պլանավորման, մշտադիրտարկման քաղաքականություն, և որպես հետևանք, ֆինանսական միջոցների օգտագործման նպատակայնությունը երաշխավորող մեխանիզմներ: Առկա է «Ֆինանսական միջոցների օգտագործման նպատակայնությունը երաշխավորող մեխանիզմները (աուդիտներ,

հաշվետվություններ)» ընթացակարգը, որով, սակայն, ՄԿԾ-ների նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխումը չի կանոնակարգվում:

7.4 ՄՈՒՀ-ի ռեսուրսային բազան հնարավորություն է ընձեռում մասնագիտությունների կրթական ծրագրերի և ռազմավարական պլանի իրականացման համար, ինչը նպաստում է որակի շարունակական բարելավմանը և կայունությանը:

Փորձագիտական խմբի այցի ընթացքում իրականացված ուսումնասիրությունները փաստում են, որ քոլեջի ռեսուրսային բազան և տրամադրվող լրացուցիչ ռեսուրսները հնարավորություն են տալիս իրականացնել ընտրված միջին մասնագիտական կրթական ծրագրերը: Որպես դրական փաստ կարելի է նշել որոշ գործատուների մոտ ուսանողների պրակտիկա անցնելը, որտեղ կահավորումը և տեխնիկական հագեցվածությունը համապատասխանում են ժամանակի պահանջներին:

Շատ քիչ ռեսուրսներ են հատկացված հետազոտական աշխատանքներ իրականացնելու համար: Թեպետ պետք է նշել, որ ՄՈՒՀ-ը դեռևս չի իրականացրել ռեսուրսային բազայի համապատասխանության ամբողջական վերլուծություն ՌԾ և ՄԿԾ արդյունավետ իրականացման տեսանկյունից, սակայն ռեսուրսներով ապահովվածության խնդիրները ներքին շահակիցների շրջանում վեր են հանվում հարցումների միջոցով: Արդյունքում, լսարանների բարելավման առանձին դեպքեր են արձանագրվել. վերջին տարում իրականացվել է լսարանների վերազինում մուլյաժով:

7.5 ՄՈՒՀ-ում առկա է տեղեկատվությունը և փաստաթղթավորման գործընթացները կառավարելու հստակ քաղաքականություն և ընթացակարգ:

Տեղեկատվության և փաստաթղթաշրջանառության ներքին ու արտաքին փաստաթղթերի շարժն իրականացվում է «Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջի գործավարությանը, տեղեկատվության և փաստաթղթաշրջանառության կառավարման համակարգը» կարգին համապատասխան, որը սակայն, ամբողջությամբ չի ընդգրկում տեղեկատվության և փաստաթղթաշրջանառության ոլորտը և բարելավման կարիք ունի: Թեև քոլեջն իր ԻՎ-ում նշում է, որ «Քոլեջում առկա է տեղեկատվությունը և գործում է փաստաթղթաշրջանառության կառավարման հստակ համակարգ», սակայն փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ գործուն համակարգ չկա և դեռևս վերանայման օրինակներ չեն արձանագրվել:

ՄՈՒՀ-ի վերաբերյալ տեղեկատվության տարածումը իրականացվում է հայտարարությունների, տպագիր և էլեկտրոնային մամուլի, ֆեսբուքյան էջի միջոցով:

7.6 ՄՈՒՀ-ն ստեղծում է ապահով և անվտանգ միջավայր առողջապահական և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների միջոցով՝ հաշվի առնելով հատուկ կարիքներ ունեցող ուսանողներին:

Քոլեջում գործում է անվտանգության և առաջին օգնության կաբինետ՝ բուժկետ: Բուժկետը ապահովված է առաջին բուժօգնության համար անհրաժեշտ դեղորայքով, որը պարբերաբար թարմացվում է: Անվտանգության նկատառումներով քոլեջում կան հակահրդեհային միջոցներ:

Սովորողների իրազեկության բարձրացման և արտակարգ իրավիճակներում արագ կողմնորոշվելու կարողությունների ձևավորման նպատակով դասավանդվում է «Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր» առարկան:

ՄՈՒՀ-ում առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսանողների առողջության և անվտանգության պահպանմանն ուղղված քաղաքականություն և

ընթացակարգեր մշակված չեն, համապատասխան ծառայություններ չկան: Քոլեջի շենքային պայմանները հարմարեցված չեն հատուկ կարիքներ ունեցող ուսանողների համար:

Քոլեջի ուսանողների հետ շփման արդյունքում, պարզվեց, որ նրանց համար տվյալ միջավայրն ապահով է, այլապես նրանք չէին ընտրի այդ կրթական հաստատությունը:

7.7 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներ:

Ռեսուրսների կիրառելիությունը, հասանելիությունը և արդյունավետությունը գնահատելու նպատակով քոլեջի ՈՆԱ պատասխանատուն ուսանողների և դասավանդողների շրջանում հարցումներ է անցկացրել, որոնք բացահայտել են ռեսուրսների կիրառելիության և հասանելիության խնդիրներ: Հարցումների վերլուծություններ դեռևս չկան:

Պետք է նշել, որ կատարված հարցումները չեն ընդգրկում տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության ամբողջական գնահատումը: Իրականացված հարցումներից բացի այլ վերլուծական մեծանիզմներ չեն կիրառվում, օրինակ՝ պարբերական մշտադիտարկում և այլն: Փորձագիտական խումբը չնկատեց քոլեջի այլ ներքին շահակցիների (վարչական և սպասարկող անձնակազմ) խմբերի շրջանում կատարված հարցումներ՝ տրամադրվող ռեսուրսների վերաբերյալ:

Ուսանողները հնարավորություն ունեն տրամադրվող ռեսուրսների վերաբերյալ իրենց հուզող հարցերը բարձրացնել և ստանալ պատասխաններ դեկավար կազմի հետ հանդիպումների ժամանակ: ՄՈՒՀ-ում գործող գրեթե բոլոր խորհուրդներում առկա են ՈՒԽ-ից անդամներ: Քննարկվող հարցերը ներկայացվում են կուրսերում:

Դասապրոցեսի իրականացման համար դասախոսների և ուսանողների համար առկա էին անհրաժեշտ ռեսուրսներ: Մասնավորապես՝ դասախոսների և ուսանողների համար հասանելի էին բոլոր անհրաժեշտ դիդակտիկ նյութերը, պոստերները, լսարանները և այլն, միջանցքում, տեսանելի վայրում, փակցված էր դասացուցակները՝ ըստ մասնագիտությունների:

Իրականացված դասալսումներին պարզվեց, որ կիրառվում են քննարկումների մեթոդներ՝ ուսանողների ակտիվ մասնակցությամբ:

Պարզ դարձավ, որ դասախոսները՝ հանդիսանալով որպես կայուն ռեսուրս ՄՈՒՀ-ի համար, ապահովում էին շարունակական կապը ինչպես ուսանողների, այնպես էլ շրջանավարտների հետ: Օրինակ՝ շրջանավարտները, ովքեր աշխատում էին դեղատներում, մշտապես կարող էին կոնտակտի մեջ լինել իրենց դասախոսների հետ՝ նրանցից ստանալով անհրաժեշտ տեղեկատվություն, խորհրդատվություն այս կամ այն դեղամիջոցի վերաբերյալ:

Արդյունավետ են օտագործվում նաև քոլեջի բազաները, որտեղ ուսանողներն անցնում են իրենց գործնական պարապմունքները: Ուսանողների հետ հանդիպման ժամանակ պարզվեց, որ Վարդենիս քաղաքի, քոլեջի բազա հանդիսացող եռհարկանի պոլիկլինիկայի մանկաբարձագինեկոլոգիական, ընդհանուր թերապիայի և վիրաբուժական կաբինետները ոչ միայն հասանելի են ուսանողների համար, այլև բավականին արդյունավետ են օգտագործվում ուսումնառության ընթացքում:

Վարդենիս քաղաքի գինվորական հոսպիտալ կատարած այցի ժամանակ պարզվեց, որ այս բազան նույպես օգտագործվում է արդյունավետ և շահագրգռված է համալրելու իր անձնակազմը նոր մասնագիտական բուժկադրերով: Որպես գնահատման մեխանիզմ կիրառվում էր գործնական բազաների աշխատակիցների՝ պրակտիկայի ղեկավարի կողմից տրվող գնահատականը ուսանողներին:

Գրադարանային ֆոնդը ևս հասանելի էր ուսանողների համար, միաժամանակ արդյունավետ օգտագործվում էր: Առկա էին գրանցամատյանները, որոնք էլ վկայում էին գրադարանային ռեսուրսի արդյունավետ օգտագործման մասին:

ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ Փորձագիտական խումբը գտնում է, որ ընդհանուր առմամբ քոլեջի ռեսուրսները ապահովում են կրթական ծրագրերի իրականացումը և քոլեջի կայուն գործունեությունը: Միաժամանակ պետք է նշել, որ չնայած առկա կրթական ռեսուրսներին, այնուամենայնիվ, տեխնիկական միջոցներով վերահագեցման անհրաժեշտություն կա, ինչի մասին փաստեցին նաև փորձագիտական խմբի հետ հանդիպման մասնակիցները: Քոլեջում կատարված հարցումները ցույց են տալիս, որ ուսանողներն և դասախոսները դեռևս բավարարված չեն գրադարանային ռեսուրսներից, որը մտահոգիչ է ՄԿԾ-ների իրականացման տեսանկյունից:

Ծախսերը մանրամասնեցված չեն ըստ ռազմավարական նպատակների և կրթական ծրագրերի, որն առավել հասցեական կդարձներ կատարվող ֆինանսական ներդրումները ապագայում: Ֆինանսական միջոցների պլանավորման և բաշխման գործող քաղաքականության արդյունավետության գնահատման մեխանիզմներ դեռևս առկա չեն, ինչը կարող է իջեցնել քոլեջի կողմից ֆինանսական միջոցների բաշխման արդյունավետությունը:

Տեղեկատվության և փաստաթղթաշրջանառության կառավարման ոլորտում քոլեջը որոշակի փորձել է կանոնակարգել ոլորտը: Դրան են նպաստում համացանցային հարթակների միջոցով որոշակի տեղեկատվության տարածումը, սակայն փաստաթղթաշրջանառության լիակատար համակարգ քոլեջում դեռևս չկա:

Քոլեջը ստեղծել է ապահով և անվտանգ միջավայր առողջապահական և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների միջոցով: Դրան է նպաստել բժշկական մասնագիտությունների յուրահատուկ կարգավիճակը և ապահովվածությունը անհրաժեշտ սարքավորումներով: Բուժմասն առկա դեղորայքով և սարքավորումներով կարող է ապահովել առողջապահական ծառայության պատշաճ որակ:

Քոլեջում կիրառվում է կրթական միջավայրի գնահատման հարցումների մեխանիզմը: Այս հանգամանքը նպաստավոր կարող է լինել կարիքների վերհանման և կրթական միջավայրի հետագա կատարելագործման տեսակետից: Բյուջեում աշխատավարձային ֆոնդի մեծ (80%) մասնաբաժինը, սահմանափակել այլ առանցքային ոլորտներում ներդրումներ կատարելու հնարավորությունը (օր.՝ հետազոտություն, գրադարան, միջազգայնացում) և թուլացնում ռազմավարական ծրագրի իրականացման արդյունավետությունը, դրա հետ մեկտեղ աշխատավարձի նվազեցումը կարող է ռիսկային լինել որակյալ մարդկային ռեսուրսներ ներգրավելու տեսանկյունից: Հետևապես ելքը ոչ թե աշխատավարձի կրճատումն է, այլ նոր ֆինանսական միջոցների հայթայթումը:

Քոլեջի տնօրինությունը բարի կամք դրսևորելով և ներգրավելով արտաքին աղբյուրներ միկրոավտոբուսներ է տրամադրում ուսանողներին հեռավոր գյուղերից տեղափոխելու համար, ինչը այդ ուսանողների համար կրթություն ստանալու հնարավորություն է ստեղծում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝ Հաշվի առնելով, որ վերջին տարիներին Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջը ջանքեր է ներդնում ռեսուրսների բարելավման և հարստացման ուղղությամբ՝ ներգրավելով արտաքին աղբյուրներ, առկա են կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ պայմաններ, ստեղծված է ապահով և անվտանգ միջավայր ուսումնական գործընթացի կազմակերպման համար, փաստաթղթավորման համակարգի արդյունավետության բարելավման նպատակով պլանավորվել է ներդնել քոլեջի կայքը՝ որպես փաստաթղթաշրջանառության օժանդակող լավագույն միջոց, փորձագիտական խումբը գտնում է, որ Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջն ունի ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների իրականացման համար:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ՝ Փորձագիտական խումբը Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 7-ի պահանջներին գնահատում է բավարար:

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՒՄԱՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՉԱՓԱՆԻՇ՝ ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

ՓԱՍՏԵՐ

8.1 ՄՈՒՀ-ն ունի հաշվետվողականության սահմանված կարգ:

Քոլեջն իր ռազմավարական նպատակներից է համարում հաշվետվողականությունը, այն է՝ «Զարգացնել ուսումնական գործընթացի իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվական համակարգերը:» (Նպատակ 3, խնդիր 3.3):

Քոլեջում առկա է ներքին հաշվետվողականության համակարգ: Այն սկսում է ՊԴ կազմից, այնուհետև ամբիոնի և բաժինների կողմից ներկայացվող հաշվետվությունները, որոնց հիման վրա ձևավորվում է քոլեջի տնօրենի միասնական հաշվետվությունը: Հաշվետվությունները արտահայտում են տարեկան կամ կիսամյակային պլաններով նախատեսված գործողությունները: Քոլեջի որոշ ստորաբաժանումներ իրականացրած կամ իրականացվող աշխատանքների և միջոցառումների մասին տեղեկատվությունը հրապարակում են քոլեջի ֆեյսբուքյան էջում:

ՄՈՒՀ-ը տարվա ընթացքում, օրենքով սահմանված կարգով, հաշվետվություններ է ներկայացնում ՀՀ ԿԳՍՄ նախարարությանը, ՀՀ հարկային ծառայությանը և այլ պետական գերատեսչություններին: Այդ հաշվետվություններում արտացոլվում են Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջի գործունեության գրեթե բոլոր բնագավառներն ու հիմնախնդիրները (տարեկան և եռամսյակային ֆինանսական հաշվետվություններ, հաստիքացուցակ, գործուղումներ և այլն):

Քոլեջն ունի հասարակության հետ որոշակի կապեր, որը սակայն համակարգված բնույթ չի կրում: Արտաքին շահակիցների՝ գործատուների և գործնական աշխատանքների ղեկավարների հետ հանդիպման արդյունքում պարզվեց, որ վերջիններս քաջատեղյակ են ՄՈՒՀ-ում իրականացվող գործընթացների մասին, կարևորում են քոլեջի դերը շրջանի կրթական և առողջապահական ոլորտներում: Փորձագիտական խումբը այցելեց և հանդիպումներ ունեցավ Վարդենիսի քաղաքապետի և քաղաքապետարանի աշխատակազմի հետ, գինվորական հոսպիտալի ղեկավարների և գործնական պարապմունքներ իրականացնող բժիշկների, պոլիկլինիկայի գործնական պարապմունքներն իրականացնող բժիշկների, ՄՈՒՀ-ի հետ համագործակցող դպրոցի տնօրենի և ուսուցիչների հետ, հասարակական կազմակերպության ղեկավարի, դեղատան և կոսմետոլոգիական սրահի ղեկավարների և աշխատակիցների հետ: Վերջիններիս հետ շփումների արդյունքում պարզվեց, որ արտաքին շահառուները տեղեկացված են քոլեջի գործունեության վերաբերյալ:

Քոլեջը չունի կայքէջ, սակայն ֆեյսբուքյան էջի միջոցով պարբերաբար ներկայացնում է իր կողմից իրականացվող աշխատանքները՝ լուսանկարների և տեքստերի միջոցով:

Քոլեջն իր ԻԿ-ում նշում է, որ «ՄՈՒՀ-ում գործող հաշվետվողականության մեխանիզմները նպաստում են կառավարման բարելավմանը, քանի որ ներկայացված հաշվետությունները հնարավորություն են տալիս գնահատել համապատասխան օղակների կատարած աշխատանքները և դրանց արդյունավետությունը»: Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ ըստ հաշվետվությունների գնահատել հնարավոր չէ համապատասխան օղակների կատարված աշխատանքը, քանի որ հաշվետվությունները վերլուծական բնույթի չեն, կրում են պարզ և նկարագրողական շարադրանք:

Քոլեջը դեռևս չունի միասնական հաշվետվողականության սահմանված կարգ:

8.2 ՄՈՒՀ-ն ապահովում է ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելությունը հասարակությանը:

Քոլեջի գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը, կարգերը, ընթացակարգերը, ձեռնարկները և այլ համակարգող փաստաթղթեր հրապարակվում են ֆեսբուքյան էջի, տպագրվող տեղեկատուների, հեռուստաընկերության, տպագիր մամուլի միջոցով: Ըստ ԻՎ-ի արտաքին հաշվետվողականություն ապահովելու նպատակով քոլեջը կիրառում է հետևյալ միջոցները՝

- Մարզային հեռուստատեսությամբ ներկայացվող տեղեկատվական տեսաֆիլմեր
- ՄՈՒՀ-ի կողմից կազմակերպված, ինչպես նաև մասնակցած համաժողովները, սեմինարները և այլ միջոցառումները
- Սփյուռ տեղեկատվական կենտրոնը
- Սոցիալական ցանցերը:

ՄՈՒՀ-ն իրականացնում է նաև տարաբնույթ հանդիպումներ և ճանաչողական այցեր տարածաշրջանի դպրոցներ:

Այցի ժամանակ փորձագիտական խումբը պարզեց, որ Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջը երկու քոլեջներում (Հյուսիսային համալսարանի քոլեջ և Հայ-հունական պետական քոլեջ) լիազոր մարմնի որոշման համաձայն կազմակերպել է նախորդ տարիների ավարտած շրջանավարտների պետական ամփոփիչ ատեստավորման գործընթացը, որի նպատակն է եղել շրջանավարտներին շնորհել պետական նմուշի դիպլոմ աշխատաշուկայում հետագա խնդիրների հաղթահարելու համար: Այդ քննություններին մասնակցել է 65 ուսանող: Նպաստաձևությունը դրական առումով մեծ արձագանք է գտել շրջանավարտների և ուսանողների շրջանում:

8.3 ՄՈՒՀ-ում գործում են հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմներ:

Հասարակության կողմից քոլեջի գործունեության վերաբերյալ հետադարձ կապի ապահովումը հիմնականում իրականացվում է ֆեյսբուքյան էջի միջոցով: Հասարակության կողմից ստացվող արձագանքները հավաքագրվում են հիմնականում կարիերայի պատասխանատուի կողմից, որն իր գործունեությունը սկսել է 2018թ-ից:

Չկան հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմներ, արդյունքների վերլուծություններ, կայքը դեռևս պատրաստ չէ:

ՄՈՒՀ-ում, չնայած որ կան արտաքին շահակիցների առջև հաշվետվողականությունն ապահովող կանոնակարգված մեխանիզմներ, այնուամենայնիվ, չկան դրանց արդյունավետության գնահատման և արդյունքների ներկայացման համար ձևավորված հետադարձ մեխանիզմներ: Հետևապես դեռևս արտաքին շահակիցների կողմից գնահատման թույլ, թերի գործընթացները հնարավորություն չեն տալիս գնահատելու ՄՈՒՀ-ի հաշվետվողականության արդյունավետությունը:

8.4 ՄՈՒՀ-ում գործում են հասարակությանը գիտելիքների (արժեքների) փոխանցման մեխանիզմներ:

Այցի ժամանակ փորձագիտական խումբը պարզեց, որ Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջի ուսանողները և տարբեր տարիների շրջանավարտները պարբերաբար (հասարակական հիմունքներով) մասնակցում են գինվորական հոսպիտալում տեղի ունեցող սուր վարակիչ բռնկումների դեպքերի կանխարգելմանը, այլ հրատապ դեպքերի ժամանակ ցուցաբերում են առաջին բուժօգնություն (ապրիլյան պատերազմի ժամանակ և այլն): Պարզվեց նաև, որ քոլեջի շրջանավարտները թեպետ չունեն հիմնական աշխատանք իրենց գյուղերում պահանջված են՝ որպես բուժքույր կամ առաջին բուժօգնություն տրամադրողներ և բնակչությունը նրանց հաճախ է դիմում տարբեր հարցերով:

Քոլեջը պլանավորում է, իրականացանել կարճաժամկետ, լրացուցիչ կրթական ծրագրեր: Քոլեջը իրականացնում է խորհրդատվական ծառայություններ, սակայն դրանց արդյունավետության գնահատման մեխանիզմներ և գործիքները դեռևս ձևավորված չեն:

Դատողություններ՝ Քոլեջում առկա հաշվետվողականության մեխանիզմը նպաստում է հաշվետվողականության որակի բարձրացմանը, թափանցիկ է դարձնում քոլեջի գործունեությունը: Քոլեջում գործում են որոշ մեխանիզմներ, որոնցով ապահովվում է ընթացակարգերի և գործընթացների թափանցիկությունը (ֆեյսբուքյան էջ, տպագիր մամուլ, հեռուստաընկերություն և այլն): Այդ տեսակետից քոլեջը պետք է առավելագույնս նպաստի տեղեկատվության տարածմանը արտաքին և ներքին շահակիցների շրջանում: Թույլ կողմ կարելի է համարել այն, որ քոլեջի կայքէջը դեռևս չի գործում և տեղեկատվությունը ամբողջությամբ չի տարածվում քոլեջի վերաբերյալ:

Դրական համարելով այն, որ քոլեջի շրջանավարտները պահանջված են շրջապատի կողմից և ծառայություններ են մատուցում գյուղերում, կամավորության սկզբունքով հարկ եղած պահին օգնում հոսպիտալին, փորձագիտական խումբը նշում է, որ դրանք ինստիտուցիոնալ կարգավորման կարիք ունեն, ինչը կարող է բարձրացնել քոլեջի հեղինակությունը տարաշածրջանում, անհրաժեշտ է մշակել մեխանիզմներ, որոնք հնարավորություն կտան գնահատել և համակարգել մատուցվող ծառայությունները:

Եզրակացություն՝ Հաշվի առնելով, որ Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջում առկա է հաշվետվողականության համակարգ, որը հիմնականում վեր է հանում քոլեջում առկա խնդիրները, հասարակությանը տրամադրվող տեղեկատվությունը ընդհանուր առմամբ հասանելի է, առկա են հասարակությանը գիտելիքի փոխանցման մեխանիզմներ, փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարար չափով հաշվետու է հասարակությանը:

Եզրահանգում՝ Փորձագիտական խումբը Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 8-ի պահանջներին գնահատում է բավարար:

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ԻՆՏԱԳՐԱՑՈՒՄ

ՉԱՓԱՆԻՇ՝ Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

ՓԱՍՏԵՐ

9.1 Փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայր ստեղծելու նպատակով ՄՈՒՀ-ում գործում է արտաքին կապերի հաստատումը խրախուսող քաղաքականություն ու ընթացակարգեր:

Քոլեջը ունի տնօրենի կողմից հաստատված հասարակայնության հետ, արտաքին կապերին նպաստող քաղաքականություն և գործունեության կանոնակարգ, որտեղ նախատեսում է մոտակա ժամանակաշրջանում հասարակական գործընթացներում քոլեջի ակտիվ ներգրավումը, արտաքին կապերի ստեղծումը, դասախոսների և ուսանողների փոխանակման ծրագրերի կազմակերպումը: Արտաքին կապերի և միջազգայնացման համարպատասխանատու ենթակառուցվածք ՄՈՒՀը առայժմ չունի:

Համաձայն քոլեջի ինքնավերլուծության, քոլեջում առկա է հասարակության հետ կապերի ապահովման բաժին և ընթացակարգ՝ «Կանոնակարգ հասարակայնության հետ կապերի բաժնի», սակայն փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ նման բաժին

դեռևս գոյություն չունի: Չի գործում նաև ԻՎ-ում ներկայացված «Քոլեջի հասարակայնության հետ, արտաքին կապերին նպաստող քաղաքականություն»-ը: Քոլեջի ՌԾ-ով նախատեսված չեն արտաքին կապերի և միջազգայնացմանը նպաստող քայլեր:

9.2 ՄՈՒՀ-ի արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ենթակառուցվածքը երաշխավորում է կանոնակարգված գործընթաց:

Քոլեջն ԻՎ-ում նշում է, որ *«արտաքին կապերի և միջազգայնացման համար պատասխանատու ենթակառուցվածք ՄՈՒՀ-ը առայժմ չունի»:* Միջազգայնացմանն ուղղված գործընթաց քոլեջում դեռևս չի իրականացվում, սակայն փորձագիտական խումբը քոլեջի հարուստ արտաքին կապերի ակտիվությունը դարձավ: Քոլեջը համագործակցում է ոլորտային կարևոր դերակատարների հետ: Փորձագիտական խմբի այցի ընթացքում պարզվեց, որ քոլեջում կա գիտակցում արտաքին կապերի զարգացման ուղղությամբ և ՀՀ որոշ քոլեջներ կատարվել են ճանաչողական այցեր:

9.3 ՄՈՒՀ-ն արդյունավետորեն համագործակցում է տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ:

ՄՈՒՀ-ի կողմից կնքվել են մի շարք պայմանագրեր տեղական հաստատությունների հետ մասնավորապես՝ զինվորական հոսպիտալի, պոլիկլինիկայի, դեղատների, բուժական կոսմետոլոգիական սրահի, դպրոցի, գրադարանի հետ:

Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջ այցելության ընթացքում փորձագիտական խումբը հանդիպումներ ունեցավ վերոնշյալ մի շարք կազմակերպությունների ղեկավարների և գործնական պարապմունքների պատասխանատուների հետ, վերջիններս բավականին բարձր գնահատեցին թե՛ ՄՈՒՀ-ի հետ համագործակցության հեռանկարները և թե ուսանողների ներգրավվածության ակտիվությունը և գիտելիքները:

Վարդենիսի Կայազորային զինվորական հոսպիտալի ղեկավարը, Վարդենիսի հոգեբուժարանի տնօրենը, որպես գործատու, փորձագիտական խմբի այցի ժամանակ պատրաստակամություն հայտնեցին ներգրավել, ընդունել աշխատանքի քոլեջի շրջանավարտներին, այն պայմանով, եթե քոլեջը լինի հավատարմագրված և շրջանավարտներն ունենան պետական նմուշի դիպլոմ:

Այս փաստը կարևորվում է, այն տեսանկյունից, որ տեղական կառույցների հետ համագործակցությունը ՄՈՒՀ-ն իրականացնում է արդյունավետորեն:

Տեղական հաստատությունների հետ համագործակցությունը իրականացվում է հիմնականում ուսանողների պրակտիկայի կազմակերպման համար (Վարդենիսի ԵՄՔԱ բուժական կոսմետոլոգիայի սրահ, Վարդենիսի կայազորային զինվորական հոսպիտալ զորամաս, Վարդենիսի քաղաքային գրադարան և այլն), ՀՀ նմանատիպ ուսումնական հաստատությունների և այլ կազմակերպությունների հետ համակարգված համագործակցություն չի իրականացվում:

Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ դասախոսների ակադեմիական շարժունություն Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջում չի իրականացնում, չկան նաև միջազգային կառույցների հետ համագործակցության օրինակներ:

9.4 ՄՈՒՀ-ն ապահովում է ներքին շահակիցների օտար լեզվի իմացության անհրաժեշտ մակարդակ՝ միջազգայնացման արդյունավետությունը բարձրացնելու համար:

Քոլեջն իր ԻՎ-ում նշում է, որ «Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջը, ցավոք չունի դասավանդողների օտար լեզուների մասնագիտական մակարդակի իմացությանը նպաստող մեխանիզմներ, աշխատակազմի համար նախատեսված օտար լեզվի դասընթացներ», ինչը հաստատվեց փորձագիտական այցի ուսումնասիրությունների ընթացքում: Այցելության ընթացքում պարզվեց նաև, որ ՄՈՒՀում աշխատում է անգլերեն լեզվի բարձրակարգ դասախոս, որը տվյալ պահին անցնում էր վերապատրաստում և ով պատրաստակամություն

հայտնեց իրականացնելու աշխատակազմի օտար լեզվի ուսուցումը: Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջը չի կատարել առաջավոր փորձի համեմատական վերլուծություն:

ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ Փորձագիտական խումբը ռիսկային է համարում քոլեջի միջազգայնացմանը նպաստող քայլերի և կազմակերպական կառուցվածքում կառույցի բացակայությունը: ՄՈՒՀ-ի ՌՕ-ում միջազգայնացմանը և արտաքին կապերին ուղղված քայլերի բացակայությունը վտանգի տակ է դնում քոլեջի հետագայում միջազգային համանման կամ այլ կառույցների հետ համագործակցության հարցը:

Փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջի արտաքին կապերի հաստատումը խրախուսող քաղաքականության ու ընթացակարգերի լիարժեք վերանայումը և կիրառումը, որտեղ համակարգող բաժնի (կամ պատասխանատուի հաստիքի) ստեղծումը կբարձրացնի քոլեջի միջազգայնացման գործընթացի արդյունավետությունը և կակտիվացնի դասախոսների և ուսանողների շարժունությունը:

Քոլեջի դասախոսների և ուսանողների օտար լեզուներին տիրապետելը կապահովի արտաքին կապերի ակտիվացման հեռանկարներ: Օտար լեզվի մակարդակը դեռևս անբավարար է մասնագիտական դասընթացների վարման և կրթական ծրագրերի շրջանակներում ուսանողների փոխանակման համար, ուստի պետք է անցկացնել օտար լեզվի լրացուցիչ դասընթացներ, որոնք փորձագիտական խմբի կարծիքով նպաստող գործոն կարող են հանդիսանալ քոլեջի միջազգայնացման համար:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ՊԿՉ-ով նախատեսված է պարտադիր երկու օտար լեզվի ուսումնասիրում ուսանողների համար միջին մասնագիտական ծրագրերի շրջանակում: Սակայն մտահոգիչ է այն փաստը, որ քոլեջում դեռև ուսանողների մասնակցությամբ օտար լեզվով միջոցառումներ կամ այլ ծրագրեր չեն իրականացվում: Մտահոգիչ է նաև միջազգային հաստատությունների հետ համագործակցության բացակայությունը:

Անձնակազմի և ուսանողների շրջանում օտար լեզվի (անգլերենի և այլն) իմացության աստիճանը բարձրացնելու նպատակով քոլեջը դասընթացներ չի իրականացնում, որն օտար լեզվի իմացության խնդրի լուծման կարևորագույն միջոցներից է հանդիսանում: Օտար լեզուների տիրապետման ցուցանիշները դեռևս ցածր են և շարունակում են մնալ միջազգայնացման հիմնական խոչընդոտներից մեկը: Խնդրի լուծման համար նպատակառուղղված քաղաքականություն չի իրականացնում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝ Հաշվի առնելով, որ Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջում չի գործում արտաքին կապերի և միջազգայնացմանը նպաստող բաժին կամ կառույց, որն կիրականացնի միջազգայնացմանն ու արտաքին կապերի զարգացմանն ուղղված աշխատանքներ, մշակված չեն արտաքին կապերի հաստատումը խրախուսող քաղաքականություն ու ընթացակարգերը, քոլեջը ներգրավված չէ միջազգային ծրագրերում, ՄՈՒՀ-ը քայլեր չի ձեռնարկում ակտիվացնելու ուսանողների և դասախոսների արտագնա և ներգնա շարժունությունը, քայլեր չեն ձեռնարկվում դասախոսների և ուսանողների շրջանում անգլերեն լեզվի իմացության մակարդակի բարձրացման ուղղությամբ, փորձագիտական խումբը գտնում է, որ Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջը չի բավարարում չափանիշի պահանջները:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ՝ Փորձագիտական խումբը Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջը ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 9-ի պահանջներին գնահատում է անբավարար:

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

ՓԱՍՏԵՐ

10.1 ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:

Քոլեջի որակի ապահովման ընդհանուր քաղաքականությունը սահմանված է մի շարք փաստաթղթերում, ինչպես օրինակ «Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջի որակի ներքին ապահովման կառույցի ՈՆԱԿ առաքելությունը և նպատակները», «Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջի որակի ապահովման քաղաքականությունը և ընթացակարգերը» և այլն:

Որակի ապահովման պատասխանատուի նշանակումից ի վեր (2018թ.) մշակվել են քոլեջի գործունեության ոլորտները գնահատող բազմաթիվ փաստաթղթեր (Որակի ներքին ապահովման ենթակառույցի կողմից մշտադիտարկման ենթակա գործառույթներ և որակի ներքոլեջային վերահսկողության հանձնաժողովի գործունեության ընթացակարգ, ՄՈՒՀ-ի առաքելության, սահմանած նպատակների և խնդիրների վերանայման քաղաքականությունը, ներքին շահակիցների բավարարվածության հարցման կանոնակարգ, սակայն դրանք դեռևս լիարժեք չեն գործում կամ բովանդակային առումով լրամշակման կարիք ունեն:

10.2 Որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման նպատակով ՄՈՒՀ-ը տրամադրում է մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

2018թ.-ին քոլեջում ստեղծվել է Որակի ներքին ապահովման պատասխանատուի հաստիք, որը միտված է աջակցելու հաստատության ՈԱ գործընթացներին: ՈՆԱ աշխատանքները կանոնակարգվում են տնօրենի տեղակալի կողմից, որն ունի սահմանված պաշտոնի հրահանգ: Որակի պատասխանատուն, սակայն, անկախ չէ և անմիջապես տնօրենին չի ենթարկվում, այլ, ըստ փորձագիտական խմբի կարծիքի, կարող է վտանգել ՈՆԱ պատասխանատուի աշխատանքային գործունեության արդյունավետությունը: Կազմվում է տարեկան պլան, սակայն պլանին կից ռեսուրսների ցանկ և ՈԱ գործընթացներին հատկացվող բյուջե չի տրամադրվում:

Քոլեջն իր ԻՎ-ում նշում է, որ «Ստեղծված են վարչաղասախոսական և ուսանողական հանձնաժողովներ, որոնք հիմնականում անց են կացնում մշտադիտարկում, իրազեկում, բացահայտում, վերահսկում, կատարում՝ վիճակագրական, վերլուծական աշխատանքներ»: Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ նման աշխատանքներ դեռևս չեն իրականացվում, իսկ որոշ խմբերի առկայությունը հաստատեց, որ գործում են ձևական և տեղյակ չեն որակի ապահովման աշխատանքներից:

Փորձագիտական այցի ընթացքում նկատվեց որակի ապահովման գործառույթների վերաբերյալ քոլեջի աշխատակիցների տեղեկացվածության և փորձի պակաս:

10.3 Ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են որակի ապահովման գործընթացներում

Համաձայն «Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջի որակի ապահովման քաղաքականությունը և ընթացակարգերը» փաստաթղթի, ներքին և արտաքին շահակիցները նույնպես պետք է մասնակցեն ՈԱ գործընթացներին: Ներքին շահակիցները մասնակցում են ՈԱ պատասխանատուի կողմից կազմակերպվող հարցումներին մասամբ, քանի որ քոլեջի ոչ բոլոր ներքին շահակիցների շրջանում է անցկացվում համապատասխան հարցումներ կամ ֆոկուս խմբեր, իսկ ՄԿԾ-երի արդյունավետության գնահատման փորձ կատարվել է շրջանավարտների և գործատուների շրջանում կատարվող հարցումների հիման վրա, որը, սակայն, դեռևս չի վերլուծվել:

Հարցումներից բացի ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության մեխանիզմներ և օրինակներ առկա չեն: Քոլեջի ԻՎ-ում նշվում է, ուսանողները ևս մասնակցություն են ունեցել ինքնավերլուծության գործընթացին, սակայն փորձագիտական խմբի այցի ընթացքում պարզվեց, որ ուսանողները տեղյակ չեն ինքնավերլուծություն իրականացնելու ձևաչափին:

10.4 Որակի ներքին ապահովման համակարգը պարբերաբար վերանայվում է:

Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջում ՈԱ լավագույն փորձի ուսումնասիրում դեռևս չի իրականացվել:

ՈԱ պատասխանատուի գործունեությունը ներկայիս փուլում ուղղված է քոլեջում կատարվող որակի գործընթացների պլանավորմանը և գործողությունների իրականացմանը: Քոլեջի հիմնական գործընթացներում ՊԻՍՈ շրջափուլը դեռ փակված չէ, մասնավորապես ՄԿԾ-ների մշակում, հետազոտական գործունեություն, միջազգայնացում, դասախոսական կազմի մասնագիտական առաջընթաց և այլն: Որակի ներքին ապահովման համակարգում մեկ տարվա ընթացքում կատարվել են որոշ բարեփոխումներ, սակայն համակարգի պարբերաբար վերանայման քաղաքականություն դեռևս չի կիրառվում: Մասնավորապես՝ առկա չէ համակարգի վերանայման անհրաժեշտությունը, պլանավորվող փոփոխությունները և ինչպանով այդ փոփոխությունները կնպաստեն կրթական ծրագրերի բարելավմանը, ուսանողների բավարարվածության աճին, նրանց ներգրավվածությանը հետազոտական աշխատանքներում և այլն:

10.5 Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է բավարար հիմքեր որակի ապահովման արտաքին գնահատման գործընթացների համար:

Մշակվել են բազմաթիվ կանոնակարգեր և այլ փաստաթղթեր քոլեջի որակի ապահովման համակարգը կանոնակարգելու համար, ինչպես օրինակ «Որակի ներքին ապահովման համակարգի վերանայման քաղաքականությունը, ընթացակարգերը, պարբերաբար վերանայման մեխանիզմներն ու գործիքները» և այլն: Սակայն, ինչպես նշված փաստաթուղթը, այնպես էլ մնացած հաստատված կարգերն ու ընթացակարգերը բովանդակային առումով չեն համապատասխանում գործընթացների իրականացմանը և վերանայման խիստ կարիք են զգում:

Արտաքին գնահատման գործընթացի կազմակերպման նպատակով իրականացվել են որոշակի աշխատանքներ (հարցումներ, ինքնավերլուծություն), սակայն հարցումների արդյունքների վերլուծությունները բացակայում են:

10.6 Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է ՄՈՒՀ-ի գործունեության թափանցիկությունը՝ տրամադրելով ՄՈՒՀ-ի գործընթացների որակի մասին տեղեկատվություն՝ ներքին և արտաքին շահակիցների համար:

Որակի ապահովման ներքին համակարգի վերաբերյալ թափանցիկության ապահովման կարևորագույն մեխանիզմներից կարող է հանդիսանալ քոլեջի կայքէջը, որը դեռևս չի գործում: Քոլեջում չեն իրականացվում նաև բավարար աշխատանքներ ներքին շահակիցների շրջանում ՈՆԱ համակարգի վերաբերյալ տեղեկացվածության ապահովման նպատակով, ինչը հավաստի դարձավ փորձագիտական այցի ընթացքում:

Արտաքին շահակիցները չեն մասնակցում ՈՆԱ աշխատանքներին:

Դատողություններ՝ Վերջին տարիների ընթացքում (2018-2019) քոլեջի որակի ապահովման համակարգի ներդրումն ու զարգացումը որոշակի նպաստավոր պայմաններ են ստեղծել որակի ներքին համակարգի ներդրման համար:

Քոլեջի որակի ապահովման պատասխանատուի գործունեությունը և մշակված բազմաթիվ կանոնակարգերը ընդհանուր առմամբ հիմք են հանդիսանում որակի

ապահովման գործառույթների իրականացման համար, սակայն առկա է մշակված փաստաթղթերի օպտիմալացման և դրանց գործարկման, վերանայման խնդիր:

Քոլեջի դասախոսների և ուսանողների ներգրավվածությունը որակի ապահովման գործընթացներին ապահովվում է հիմնականում հարցումների և սակավաթիվ միջոցառումների միջոցով: Առավել հաստատուն և արդյունավետ գործունեություն ապահովելու նպատակով նրանց ակտիվության աստիճանը դեռևս բարձրացման կարիք ունի:

Որակի գործընթացներում ընդգրկված մարդկային, ֆինանսական և նյութատեխնիկական ռեսուրսներն ընդհանուր առմամբ չեն ապահովում համապատասխան գործառույթների իրականացումը, իսկ որակի պատասխանատուի միջնորդավորված կապը քոլեջի տնօրենի հետ կարող է վտանգել որակի ապահովման գործառույթների իրականացման հավաստիությունը: Որակի ապահովման համակարգում արտաքին շահակիցների ներգրավվածության (որոնց շրջանում նկատվում է քոլեջի գործընթացներին մասնակցություն ունենալու հետաքրքրություն) բացակայությունը կարող է թուլացնել որակի ապահովման համակարգի արդյունավետությունը, և այդ ուղղությամբ քոլեջն ունի որոշակի անելիքներ: Քոլեջի կայքը այն միջավայրն է, որը ուղղված է որակի գործառույթների վերաբերյալ տեղեկատվության թափանցիկության ապահովմանը, որը, սակայն, չի գործում և կրթական ծրագրերի որակի վերաբերյալ տեղեկատվության տարածումը գտնվում է վտանգի տակ:

Որակի ապահովման գործընթացների քաղաքականության և ընթացակարգերի բենչմարքինգի բացակայությունը թույլ չի տվել քոլեջին դրանց արդյունավետության համեմատական գնահատում իրականացնել և ՈՆԱ համակարգի վերանայման անհրաժեշտ ուղղություններ առանձնացնել:

ՈՆԱ համակարգի առկա մեխանիզմները դեռևս չեն ապահովում բավարար հիմքեր արտաքին գնահատման համար, ինչը ՈՆԱ տվյալների հավաքագրման հուսալի մեխանիզմների և վերլուծողական գործելակերպի բացակայության հետևանք է:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում ՈՆԱ պատասխանատուի քայլերն ուղղված ներքին շահակիցների հետ ՈՆԱ հարցերի քննարկում ստեղծելու ուղղությամբ: Սակայն դեռևս չի ապահովվում քոլեջի գործընթացների որակի մասին տեղեկատվությունը արտաքին շահակիցների համար, ինչը հանգեցնում է ՈՆԱ պատասխանատուի աշխատանքների մեկուսացման:

Եզրակացություն՝ Հաշվի առնելով, որ Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջի որակի ներքին ապահովման համակարգը բավարար ինտեգրված չէ ՄԿԾ և այլ գործընթացներում, նրա ազդեցությունը գործընթացների վրա թույլ է, ՈՆԱ միջոցառումները համակարգված չեն իրականացվում, որակական վերլուծությունները և դրանց հիման վրա բարելավման քայլերը բացակայում են, ինչպես նաև ամբողջական տեղեկատվության հավաքագրման և գործունեության որակական արդյունքների հրապարակման խիստ անհրաժեշտությունը՝ կարելի է փաստել, որ որակի ապահովման համակարգը դեռ բավարար չափով չի նպաստում գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Եզրահանգում՝ Փորձագիտական խումբը Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 10-ի պահանջներին գնահատում է անբավարար:

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՉԱՓԱՆԻՇ	ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
1. Առաքելություն և նպատակներ	Բավարար
2. Կառավարում և վարչարարություն	Անբավարար
3.Մասնագիտության կրթական ծրագրեր	Բավարար
4. Ուսանողներ	Բավարար
5.Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	Բավարար
6. Հետազոտություն և զարգացում	Անբավարար
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	Բավարար
8.Հասարակական պատասխանատվություն	Բավարար
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	Անբավարար
10. Որակի ներքին ապահովման համակարգ	Անբավարար

Տիգրան Խաչատրյան,
Փորձագիտական խմբի ղեկավար

16.03.2020

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Տիգրան Մարտինի Խաչատրյանը 2011թթ. ավարտել է ՀՊՄՀ պատմության և իրավագիտության ֆակուլտետի «Պատմություն» բաժնի բակալավրիատը, իսկ 2013թ. նույն բաժնի մագիստրատուրան: 2013-2017թթ. սովորել է նույն բաժնի ասպիրանտուրայում՝ համաշխարհային պատմություն մասնագիտությամբ (Է 002): 2013-2015թթ. աշխատել է ՀՊՄՀ պատմության և իրավագիտության ֆակուլտետի դեկանի օգնական: 2009-2015թթ. ընթացքում երկու անգամ ընտրվել է նույն ֆակուլտետի ուսանողական խորհրդի նախագահ: 2016-2017թթ. աշխատել է ՀՀ ոստիկանության կրթահամալիրում որպես Կրթության որակի ապահովման խմբի առաջատար մասնագետ: 2017թ.-ից առ այսօր աշխատում է ՀՀ ոստիկանության կրթահամալիրում որպես կրթության որակի ապահովման բաժանմունքի պետ, ունի ոստիկանության ավագ լեյտենանտի կոչում: Մասնակցել է միջին մասնագիտական կրթության որակի բարձրացման հարցերին նվիրված մի շարք համաժողովների: 2018թթ.-ին մասնակցել է «Որակի ներքին ապահովումը ՀՀ մասնագիտական կրթության ոլորտում» թեմայով Ֆորումին: 2017թ.-ից փորձագետ է ՀՀ միջին մասնագիտական կրթություն իրականացնող հաստատությունների հավատարմագրման գործընթացներում: 2019թ. համակարգել է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը:

Ռոզա Մերուժանի Հարությունյանը 1992թ-ին ավարտել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի «Մանկավարժություն և տարրական ուսուցման մեթոդիկաներ» ֆակուլտետը: 2015թ-ին ավարտել է Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական քոլեջի «Հանրային սննդամթերքի տեխնոլոգիա» մասնագիտությունը: 1991-2000թ աշխատել է Արմավիրի մարզի Լուկաշին գյուղի միջնակարգ դպրոցում որպես դասվար և հայոց լեզվի և հայ գրականության ուսուցիչ: 2000թ.-ից աշխատում է Արմավիրի պետական ինդուստրիալ մանկավարժական քոլեջում, 2016թ.-ից քոլեջի ուսումնական մասի վարիչ, 2018թ.-ից ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ:

Վահե Հենրիկի Բաբայանը 1991թ.-ին ավարտել է Երևանի պետական պոլիտեխնիկական ինստիտուտի հաշվիչ տեխնիկայի /կիբերնետիկա/ ֆակուլտետը՝ ինժիներ-սիստեմատեխնիկ որակավորմամբ, 2011թ.-ին ավարտել է Մեհրաբյանի անվան բժշկական ինստիտուտի դեղագիտության ֆակուլտետը ստանալով դեղագիտության բակալավրի աստիճան, 2015թ.-ին ավարտել է Մենեջմենթի համալսարանը ստանալով իրավագիտության մագիստրոսի աստիճան: 2003-2011 թթ. Աշխատել է Մեհրաբյանի անվան բժշկական ինստիտուտում, որպես զարգացման և ֆինանսա-տնտեսական հարցերով ռեկտորի տեղակալ, ուսումնական գործընթացների կազմակերպման պատասխանատու : Հանդիսանում է Մեհրաբյանի անվան բժշկական ինստիտուտի բժշկական քոլեջի որակի պատասխանատու, 2019թ.-ից՝ ՈԱ ստորաբաժանման դեկավար:

Նելլի Կարապետյանը 2013-2017 թթ. Սովորել է Երևանի հայ-ամերիկյան «Էրեբունի» պետական բժշկական քոլեջում «Քույրական գործ» մասնագիտությամբ: 2017 թ.-ից մինչ այժմ սովորում է Հայկական բժշկական ինստիտուտի Ընդհանուր բժշկության ֆակուլտետի 4-րդ կուրսում:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

11.12.2019թ.-13.12.2019թ.

	11.12.2019 թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1.	Հանդիպում տնօրենի հետ	09:00	09:30	30 րոպե
2.	Հանդիպում ուսումնական ծրագրերի և ուս. դաստիարակչական աշխատանքների գծով փոխտնօրենի հետ	09:40	10:20	40 րոպե
3.	Հանդիպում ինքնավերլուծությունն իրականացրած աշխատանքային խմբի ներկայացուցիչների հետ (8-10 մասնակից)	10:30	11:30	60 րոպե
4.	Հանդիպում վարչական ստորաբաժանումների ղեկավարների հետ	11:40	12:20	40 րոպե
5.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	12:30	13:30	60 րոպե
6.	Հանդիպում շրջանավարտների ներկայացուցիչների հետ (8-12 շրջանավարտ)	13:40	14:30	50 րոպե
7.	Հանդիպում գործատուների ներկայացուցիչների հետ (8-12 գործատու)	14:40	15:30	50 րոպե
8.	Այցելություն կրթության որակի ապահովման բաժին	15:40	16:40	60 րոպե
9.	Փորձագիտական խմբի փակ հանդիպում	16:50	18:10	80 րոպե

	12.12.2019 թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1.	Հանդիպում ամբիոնների վարիչների հետ	09:00	10:00	60 րոպե
2.	Հանդիպում դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ (ներառյալ ինքնավերլուծության մեջ ներկայացված 3 ՄԿԾ-ները) (8-12 դասախոս)	10:10	11:10	60 րոպե
3.	Այցելություն քոլեջի ստորաբաժանումներ և փաստաթղթերի ուսումնասիրություն	11:20	12:20	60 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	12:30	13:30	60 րոպե
5.	Այցելություն ամբիոններ և փաստաթղթերի ուսումնասիրություն	13:40	14:40	60 րոպե
6.	Այցելություն ուսանողների կարիերայի աջակցման բաժին	14:50	15:50	60 րոպե
7.	Փաստաթղթերի ուսումնասիրություն	16:00	17:00	60 րոպե
8.	Փորձագիտական խմբի փակ հանդիպում	17:10	18:10	60 րոպե

	13.12.2019 թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1.	Հանդիպում ուսանողական խորհրդի և ՈՒԳԸ ներկայացուցիչների հետ (8-12 ուսանող)	09:00	10:00	60 րոպե
2.	Հանդիպում ուսանողների ներկայացուցիչների հետ (8-12 ուսանող)	10:10	11:30	60 րոպե

3.	Փորձագիտական խմբի քննարկումներ	11:20	12:20	60 րոպե
4.	Ընդմիջում	12:30	13:30	60 րոպե
5.	Բաց հանդիպում փորձագիտական խմբի հետ	13:40	14:10	30 րոպե
6.	Հանդիպումներ հասանելիության ստորաբաժանումներում	14:20	15:50	90 րոպե
7.	Ռեսուրսների դիտարկում (լսարաններ, մարզասրահներ, լաբորատորիաներ, կաբինետներ, գրադարան, բուժկետ, բուֆետ)	16:00	17:00	60 րոպե
8.	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ	17:10	17:40	30 րոպե
9.	Փորձագիտական խմբի փակ հանդիպում	17:40	18:40	60 րոպե
10.	Հանդիպում քոլեջի տնօրենի հետ	18:40	19:00	20 րոպե

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

N	ՓԱՍՏԱԹՂԹԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՉԱՓԱՆԻՇ
	Տնօրենի հրամանով հաստատված ՌԾ մշակման խմբի կազմ	1
	ՌԾ կարճաժամկետ ծրագիր	1
	Հաստիքացուցակ	2
	Տարիֆիկացիա	2
	Քոլեջի խորհուրդների նիստերի արձանագրություններ	2
	Քոլեջի աշխատակիցների անձնական գործեր	2
	Ուսումնական պլաններ	3
	Ամբիոնների աշխատանքային պլանները	3
	Ամբիոնների նիստերի արձանագրությունները	3
	Դասալսումների վերաբերյալ ամբիոնների արձանագրություններ	3
	Դասավանդողների անհատական մատյանները	3
	Դպրոցներ այցելության վերաբերյալ գրաֆիկ	4
	Դասղեկների աշխատանքային պլաններ	4
	Պրակտիկայի օրագրեր	4
	Ռեֆերատների օրինակներ	4
	Ընդունող հանձնաժողովի հաշվետվություններ դիմորդների ընդունելության վերաբերյալ	
	Դասախոսների վերապատրաստման վերաբերյալ հիմքեր /ցուցակներ, ծրագրեր, ժամանակացանկեր/	5
	Ամբիոնների և բաժինների տարեկան պլանները, հաշվետվությունները	6
	Տարեկան պլանավորման նախահաշիվներ	7
	Մեփականության վկայականներ	7
	Վարձակալության պայմանագրեր	7
	Ֆինանսական հաշվետվություններ	7
	Անցկացված հարցումների հիմքերը /լրացված հարցաթերթիկները/	10

	Որակի աշխատակցի գործառույթային պարտականություններ	
	Ստորաբաժանումների հաշվետվությունները	10

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

1. Լսարաններ
2. Համակարգչային դասարան
3. Կենսաբանության լաբորատորիա
4. Կոսմետոլոգիայի լսարան
5. Կոսմետոլոգիայի կենտրոն
6. Գրադարան
7. Բուժկետ
8. Վարդենիսի գիվորական կայազորային հոսպիտալ
9. Վարդենիսի քաղաքային պոլիկլինիկա
10. Վարդենիսի հոգեբուժարան

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

ՎԱՐԴԵՆԻՍԻ ԲԺՇԿԱ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋ

Կազմակերպական կառուցվածքի սխեմատիկ պատկերը ըստ ենթակայության և հաղորդակցության կապերի



ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

1. **ԻՎ**- ինքնավերլուծություն
2. **ՄԿԾ** - մասնագիտության կրթական ծրագիր
3. **ՄԿՈՒԶԱԿ** – Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոն
4. **ՄՈՒՀ**- մասնագիտական ուսումնական հաստատություն
5. **ՊԴ կազմ** – պրոֆեսորադասախոսական կազմ
6. **ՊԻՍԲ** – պլանավորում, իրականացում, ստուգում, բարելավում
7. **ՈԱՇ** – որակավորումների ազգային շրջանակ
8. **ՈԱ մեխանիզմներ** – որակի ապահովման մեխանիզմներ
9. **ՈՆԱ** - որակի ներքին ապահովում
10. **ՈՆԱՀ** - որակի ներքին ապահովման համակարգ
11. **ՌԾ** – ռազմավարական ծրագիր
12. **ՈւԽ** – ուսանողական խորհուրդ
13. **ՈւՕ** – ուսումնաօժանդակ կազմ